№ 67 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 25

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 25 № 67

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	„		6 դոլլար
Եւրոպա	„	„ „	30 ֆրանկ
Պարսկաստան	„	„	10 րուբլի

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Չորեքշաբթի, մարտի 26-ին
Յօգուտ
Նոր բացված դպրոցի հայ չքաւոր երեխան. օգնող «ԼՈՅՍ» ընկերութեան
Մասնակցութեամբ դերաս. Ա. ԱՐՄԷՆԵԱՆԻ
Հայ դրամատիկական խմբի անդամների եւ սիրողների
Կը ներկայացվեն
I
ԿՐԵՄՕՆԱՅԻ ՎՆԱԳՈՐԾԸ
Դրամա 1 գործ. հեղ. Ֆր. Սօպպէի, Թարգ. Ա. Արմէնեանի
II
Երաժշտական բաժին
Մասնակցում են տ. Նաւասարդեան, պ. պ. Ծովեանեան, Տրիգուբով, Ամիրաղեան և Դաւիթխանեան
Մանդալինիստների խումբը՝ ղեկավարութեամբ Մելենչուկի
III
ԱԿԱՄԱՅ ԲԺԻՇԿ
Կօմեդիա 3 գործ. հեղ. Մօլիէրի, Թարգմ. Արմէնեանի
Մասնակցում են օր. Ս. Աղամեան, տ. Զաբէլ, օր. Ծուրինեան, տ. Աստղիկ, պ. Արմէնեան, Իփէկեան, Միրզօյեան, Լաքա, Տէր-Յովհաննիսեան, Աճարոնեան և ուրիշները.
ԱԼԵԳՐԻ, Petit chevaux
ՎԵՐՋԸ
ՊԱՐԵՐ
Երաժշտական զինւորական խումբ
Տոմսակները 3 ր. 25 կ. մինչև 75 կ. ներկայացման օրը կարելի է ստանալ ժողովարանում առաւօտից:
Սկիզբը ճիշտ ժամը 8-ին
(ե. չ.) տռ. 2—1

→ ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ ←
Երեքշաբթի, մարտի 25-ին
Հաւլաբարի նորակազմ հայ դրամատիկական խումբը
Յօգուտ
Ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցի
Կը ներկայացնէ
ԱՊԱՀԱՐԶԱՆԻ ՍԻՒՐՊՐԻԶՆԵՐ
Կօմեդիա 3 արար., հեղ. Բիսսօնի և Մարսի, Թարգ. Արմէնեանի և Տիրացեանի
Մասնակցում են օր. Աղամեան, Ծուրինեան, տ. Զաբէլ, Տէր-Առաքելեան, պ. պ. Արմէնեան, Իփէկեան, Միրզօյեան, Տէր-Առաքելեան, Լաքա, Ղազարեան և այլք:
Տեղերի գները 2 ր. մինչև 20 կ.:
Տոմսակները կարելի է ստանալ Թատրոնի կասսայում:
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան:
Վարչութիւն՝ օր. Աղամեան
Ռեժիսոր՝ Արմէնեան
(կ. ե.) տռ. 2—2

Մարտի 16, կիրակի օրից
ԲԱՑ Է
Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ՋՈՒՏ
ԱԿՎԱՐԵԼՆԵՐԻ
Ցուցահանդէս
Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարեատինսկայա փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը:
Մուտքը արժէ 30 կոպէկ:
Աշակերտները և զինւորները վճարում են կէսը:
(օ. մ.) տռ. 20—6

ԿՈՄՍ Ի. Ի. ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Այսօր, մարտի 25-ին, Թիֆլիսում տօնվում է Կովկասեան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի օֆիցերական ծառայութեան յիսնամեայ յոբելեանը:

Վորոնցով-Դաշկովը՝ իբրև Փոխարքայ՝ միայն երեք տարի է ինչ որ մեր երկրումն է: Նա դեռ Կովկաս չեկած, Պետերբուրգում, երբ սկսեց իր առաջին քայլերը ղեկավարելու մեր երկրի գործերը, ցանկութիւն յայտնեց ուշադիր լինել տեղական կարիքներին ու պահանջներին, հրաւիրել ժողովրդի ներկայացուցիչներին խորհրդակցութեան կարևոր խնդիրների վերաբերութեամբ և ընթացք տալ հասունացած ու մշակված ծրագիրներին:

Առանձին մեծ նշանակութիւն տալով տեղական զեմստվոյին ինքնավարութեանը, նա հրաւիրեց յատուկ խորհրդակցութիւն այդ խնդրի քննութեան համար և դրեց նրան հերթական հարցերի շարքը:

Միևնոյն ժամանակ ընթացք տուեց գիւղական հողերի յետ գնման խնդրին, որ վաղուց սպասում էր իր լուծման:

Հայ-Թուրքական ընդհարումներից առաջ եկած գժտութիւններին վերջ դնելու համար նա գումարեց հայերից և մահմեդականներից կազմված խառն ժողով, որ քննութեան ենթարկեց հերթական մի շարք խնդիրներ: Այդ ժողովը իր բնաւորութեամբ մի նոր երևոյթ էր մեր երկրում:

Յատկապէս հայկական կեանքի համար կոմս Վորոնցով-Դաշկովի փոխարքայութիւնը նշանաւոր եղաւ նրանով, որ նա վերադարձրեց հայ-եկեղեցական կալուածքները, որոնք խլված էին նրա նախորդի՝ իշխան Գօլիցինի ձեռքով: Եւ միևնոյն ժամանակ բացեց նորից հայ դպրոցները իրանց նախկին ծրագրով և հոգաբարձական իրաւունքներով:

Կոմս Վորոնցով-Դաշկովը շատ անգամ ընդունել է պատգամաւորութիւններ և լսել նրանց զեկուցումները զանազան ընթացիկ կարիքների մասին: Այդպիսի դէպքերից մէկն էր և այն պատգամաւորութեան ընդունելը, որ դեկտեմբեր ամսին ներկայացաւ զեկուցանելու մեր երկրի անբերրիութեան և տնտեսական քայքայման մասին:

Կոմս Վորոնցով-Դաշկովը եկաւ մեր երկիրը ծանր ճգնաժամային օրերում, երբ երկիրը ալեկոծվում էր բազմատեսակ ազդեցութիւններից, որոնք անշուշտ դանդաղեցրին և կանգնեցրին նրա բարենորոգչական ծրագիրները: Բայց և այն կարճ միջոցում, որ նա Փոխարքայ է Կովկասում, գծագրված են մի քանի կարևոր նախնական քայլեր, որոնք կարող են բեղմնաւոր արդիւնքներ առաջացնել:

Թիֆլիս հաւաքված պատգամաւորութիւնները, որոնք եկել են շնորհաւորելու յոբելեարին, հաւատացած են, որ մեր երկրի բարձր կառավարիչը տոգորված է իսկապէս բարի զգացմունքներով դէպի երկիրը և նրա բարգաւաճումը:

Կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվ
50 տարի առաջ

Կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվ
ներկայումս

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 23 մարտի

Երէկ ռուսաց դեսպան Զինովիեվը սուլթանից ճաշի հրաւիրվեց, ուր ներկայ էին արտաքին և ներքին գործերի մինիստրները և Լօնդօնի ու Հռոմի Թիւրքաց դեսպանները: Ճաշից յետոյ տեղի ունեցաւ ներկայացում: Ներկայացումից յետոյ զինւորական երաժշտախումբը նուագեց ռուսաց ազգային օրհներգը, որի ժամանակ ներկայ եղողները կանգնած էին ոտքի վրա: Ամբողջ երեկոն սուլթանը յաճախ առիթներ գտաւ արտայայտելու իր՝ դէպի Թագաւոր Կայսրը տածած անկեղծ բարեկամութեան զգացմունքները: («Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 24 մարտի

Հիւպատոսների տեղեկութիւնների համաձայն, Վանում հայերի վրա գործ դրված բռնութիւններին մասնակցել են մասամբ իբրև դրդողներ, մասամբ իբրև ակտիվ կերպով վճռաբեկ դատարանի նախագահը, պօստային կառավարիչը և երկու ժանդարմական օֆիցէրներ:(«Հ. Գ.»)

Թիֆլիս, 22 մարտի

Կովկասի Փոխարքայի կարգադրութեան համաձայն, Կովկասի անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեան սերմացուի և ուտելիքի կարիքներին բաւարարութիւն տալու նպատակով փոխադրված գումարները բաժանվել են լրացուցիչ կերպով այսպէս.

1) Գանձակի նահանգապետին, բացի արդէն ուղարկված 230,000 րուբլուց, կրկին 240,000 ր.:
2) Բագուի՝ 45,000 ր.:
3) Սուխումի շրջանի կառավարչին՝ 22,530 րուբլի:
4) Բաթումի զինւորական նահանգապետին՝ 14,452 ր.:
5) Դաղստանի զինւորական նահանգապետին՝ 30,000 րուբլի:

Պետերբուրգ, 24 մարտի

Բարձրագոյն հրովարտակ Ֆինլանդիայի այժմեան սէյմը արձակելու և նոր սէյմ գումարելու մասին.

«Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկօլայ Երկրորդ, Կայսր և Միապետ համայն Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն, և այլն, և այլն, յայտարարում ենք Ֆինլանդական Մեծ Իշխանութեան բոլոր Մեր ամենահպատակներին: Հրամայելով սէյմի պատգամաւորների նոր ընտրութիւն կատարել, Մենք բարւոք գտանք արձակել այժմեան հերթական սէյմը այս տարվայ մարտի 24-ին (ապրիլի 4) և, 1906 թ. յուլիսի 7-ին (յուլ. 20) Մեր հաստատած սէյմական կանօնադրութեան 16-րդ յօդուածի համաձայն, նոր սէյմ գումարել այս տարվայ օգոստոսի 1-ին (նոր տոմարով) Հէլսինգֆորսում՝ իր պարտականութիւնները կատարելու համար սէյմի կանօնադրութեան համապատասխան»:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով մակագրված է՝ «ՆԻԿՕԼԱՅ»:

Ցարսկօէ Սէլօ, մարտի 22, 1908 թ.: Վաւերացրեց՝ մինիստր ստատս-սեկրէտար Լանգօֆ: («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 24 մարտի

Բարձրագոյն կարգադրութիւն սէյմի պատգամաւորների նոր ընտրութիւններ կատարելու մասին: Թագաւոր Կայսրը մարտի 22-ին (ապ. 4) Ցարսկօէ Սէլօում եղած ժամանակ բարձրագոյն հրամայել բարեհաճեց կատարել, համաձայն 1906 թ. յուլ. 7-ի բարձրագոյն հաստատված Ֆինլանդական Մեծ Իշխանութեան ընտրութիւնների օրէնքի, նոր ընտրութիւններ սէյմի պատգամաւորների համար և այդ ընտրութիւնները սկսել 1908 թ. յուլիսի 1-ից նոր տոմարով: Ստորագրեց մինիստր ստատս-սեկրէտար Լանգօֆ: («Հ. Գ.»)

Էջմիածնից մեզ գրում են.

Սուրէնեան արքեպիսկոպոսը մի անակընկալ որոշումն կայացրեց: Փոխարքայի խորհրդին կից կազմված դպրոցական յանձնաժողովին իր կողմից նշանակված Յուսիկ արքեպիսկոպոսին հեռացնելով՝ նրա տեղ նշանակեց անդամ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանին: Այդ քայլի մէջ նկատվում է տեղապահի փոփոխամիտ բնաւորութիւնը: Նշանակել մի արքեպիսկոպոսի անդամ այդ յանձնաժողովի, ուղարկել նրան Թիֆլիս մասնակցելու յանձնաժողովի պարապմունքներին և յետոյ հեռացնել նրան ու նշանակել մի ուրիշին՝ դա ամենաքիչը անտակտ քայլ է:

Կ. Պոլիս, 24 մարտի

Ռուսաց դեսպանը Բ. Դրան առաջ վճռական քայլեր արեց Սալօնիկում ռուսաց հիւպատոսարանի պատուաւոր Թարգմանի կեանքի դէմ մահափորձ կատարելու առիթով: Եաֆֆայում՝ հրէաների վրա կատարված բռնութիւնների գործի վերաբերութեամբ ռուսաց դեսպանի ձեռք առած քայլերի պատճառով, տեղական կայմակամը կանչված է Կ. Պոլիս:(«Հ. Գ.»)

Վիեննա, 23 մարտի

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից, որ Երլդըզ-Քեօշկը հաղորդեց դիպլօմատիական միսսիաներին, որ այսուհետև սէլամլըք յաճախողները ենթարկվելու են նախօրօք խուզարկութեան:

Ֆինանսական մասնաժողովը գտաւ, որ Մակեդօնիայում մարտի 1-ից հասարակական աշխատանքներ կազմակերպելու համար երկաթուղագծի աշխատանքները շարունակելու և կամուրջներ ձգելու անհրաժեշտ է յատկացնել 10.500,563 ղրուշ, իսկ նոր երկաթուղագծեր կառուցանելու 12.081,065 ղրուշ: («Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 23 մարտի

Սալօնիկից ստացված տեղեկութիւնների համաձայն, ռուսաց հիւպատոսարանի վիրաւորված Թարգման Հաջիմիշէվը առողջանում է և նրա կեանքը վտանգից ազատ է: («Հ. Գ.»)

Թէհրան, 24 մարտի

Մուխբիր-էլ-Միւլքը կտրականապէս մերժեց մէջլիսի նախագահի պաշտօնը ստանձնել: Մարտի 22-ին նախագահ ընտրվեց մէջլիսի արտաքին գործերի մասնաժողովի նախկին նախագահ Մումտազ-ուդ-Դօվլէն:(«Հ. Գ.»)

Հռոմ, 23 մարտի

«Պօպօլօ-Րօմանօյից» բացի, լրագիրները լոյս չը տեսան: Էլեքտրաքարշի երթևեկութիւնը կանգ առաւ: Քաղաքի արտաքին տեսքը սովորականի նման է:

Գէնուայից, Նէապօլից, Միլանից և միւս քաղաքներից հեռագրում են, որ բանւորական պալատները բանւորների ընդհանուր միութեան որոշման համաձայն որոշել են դէմ գնալ ընդհանուր գործադուլին: («Հ. Գ.»)

Նուխի, 22 մարտի

Քաղաքում այս րօպէիս խուզարկութիւններ են. խուզարկում են Ղահրմանբէգ Մէլիք-Ալլահվերդեանի տունը: Ենթադրում են, որ անցեալ տարի պօստատանը կատարված շանտաժի առիթով է: Առհասարակ վերջին ժամանակներս խուզարկութիւնները մեզ մօտ սովորական երևոյթ են դարձել: V.

Մարտի 22-ին Պետերբուրգից հեռագրում են «Касп.»-ին, որ Կովկասի Փոխարքայի յոբելեանի օրը աջակողմեան պատգամաւորները պատրաստվում են հարցապնդում անել Պետական Դումայում կովկասեան յեղափոխութիւնը սանձահարելու համար:

Բեռլինից հաղորդում են, որ Բարձրագոյն Դուռը մտադիր է վճռական կերպով մերժել Ռուսաստանի առաջարկները Մակեդօնիայում բարենորոգումներ մտցնելու մասին: («Касп.»)

Մօսկվայի լրագիրների հաղորդած լուրերը Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնների մասին մեծ անհանգստութիւն են պատճառում պարիզեան բօրսային շրջաններին: («Касп.»)

«Г. М.» լրագիրը հաղորդում է, որ Թիւրք կառավարութիւնը լուրջ պատրաստութիւններ է տեսնում պատերազմի համար: Լրագրի ասելով, Թիւրքական 4-րդ զօրաբանակը հաւաքված պատրաստ է և Էրզրումի վրայով ուղարկված է ռուսական սահմանագլուխը, ուր արդէն նշանակված են երթևեկող պահակախմբեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Կ. Պոլսոյ պատրիարք սրբազանին Էջմիածնայ Թափուր գահին թեկնածութիւնը ալ գաղտնիք մը չէ հիմա:

Ուրախ ենք, որ իր այդ փափաքին հասնելու համար հարկ եղած միջոցներուն գործադրութիւնը կանուխէն սկսած է և Եգիպտոսն ալ անտես ըրած չէ: Այսպէսով այժմ կրնանք գիտակցօրէն մաքառիլ այդ անխորհուրդ փափաքին դէմ:

Արժ. Տ. Յովհան. ա. քահ. Մկրեան, որ այդ նպատակաւ Եգիպտոս եկած է, այս անգամ ստանձնած է շատ աւելի փափուկ ու դժուարին պաշտօն մը, քան մինչև հիմա իր կատարած պաշտօնները: Եթէ իրաւ է որ ժամանակին՝ Աշըգեան պատրիարքին հրաժարականը ետ առնել տալու համար իր ջանքերը «արդիւնաւոր» եղած են (թէ անձնապէս իրեն և թէ առաջադրած գործին տեսակէտէն), աւելորդ չէ յիշեցնել իրեն, թէ պարագաները նոյնը չեն հիմա, ոչ ալ արտասահմանի միջավայրը Պոլսոյ միջավայրն է: Հոս հանրային կարծիք մը կայ—կրնանք ըսել՝ մասնաւորապէս յառաջիկայ կաթողիկոսական ընտրութեանց խնդրոյն համար՝ «հանրային կամք» մը— որուն յաղթել անհունապէս աւելի տաժանելի է, քան ծերուկ ու թոյլ պատրիարքի մը կամքը:

Անշուշտ՝ Կ. Պոլսոյ պատրիարքին դեսպանը միտքը դրած էր հանրային կարծիքին հետ գործ չունենալ: Իրեն պէտք եղածն է իր դատին շահիլ կարծիքը այս երկրին Ջոջերուն, որոնք ազգային իշխանութիւնը կը ձևացնեն։ Յայտնի է, թէ, հաւանօրէն յառաջիկայ աշնան, էջմիածին գումարուելիք կաթողիկոսական պատգամաւորական ժողովին մէջ Եգիպտոսն ալ, իբրև Պոլսոյ պատրիարքութեան մէկ թեմը, իրաւունք ունի իր երկու ներկայացուցիչները ղրկելու՝ մին կրօնական և միւսը աշխարհական, որոնք կընտրուին թեմին կրօնական և քաղաքական ժողովներէն։

Բայց այդ ժողովները, որքան ալ Օրմանեան պատրիարքը անձնական բարեկամներ կարծէ ունենալ անոնց մէջ, կաթողիկոսական ընտրութեան նման աւագ կարևորութիւն ունեցող ազգային ընդհանուր խնդրոյ մը մէջ չեն կրնար, նոյն իսկ եթէ ուզեն, բացէ ի բաց ժողովրդական կամքին դէմ ընթանալ։ Տ. Մկրեան հայր, որ ժամանակաւ աթոռ ունեցած է Պոլսոյ ազգային երեսփ. ժողովին մէջ, բաւական սուր յիշողութիւն ունի միտքը բերելու համար՝ թէ երեսփոխան հարք և տեարք ամէն ատեն իրենց ուզածը չէին ըներ, նոյն իսկ հոն։ Ո՞ւր մնաց այստեղ։

—

Այսքանը բաւ և առ այժմ շատ իսկ է Եգիպտոսի մասին՝ քանի որ կը յուսանք թէ ոչ ոք պիտի գտնուի հոս Մկրեան հօր թելադրութիւններուն հետևող։

Կը մտածենք սակայն թէ՝ եթէ Օրմանեան պատրիարք, ի նպաստ իր դատին Եգիպտոսի միակ թեմին ձայնը ապահովելու համար մինչև անգամ յատուկ դեսպան մը կը ղրկէ հոս՝ որքա՜ն աւելի իր ձեռքին մէջ ունենալ կաշխատի Թիւրքիայի թեմերուն քուէները։ Թերևս ալ, կանխաւ վստահ է այդ մասին՝ քանի որ դժբաղդաբար, բացի պաշտօնական ճնշումի միջոցէն, յաջողելու համար յոյսը դրած է գաւառաց առաջնորդներուն և առաջն. փոխանորդներուն վրայ, որոնք մեծ մասամբ Արմաշի վանքին իր ձեռնասուններն են։ Արդեօք, այս տեսակէտով, մինչև այժմ իր ընծայած օգուտներէն աւելի՝ ազգին վնասակա՞ր պիտի ըլլայ Դպրեվանքը։

Կը մնայ Կովկասն ու արտասահմանը, որոնք դիւրութեամբ կլլուելիք պատառներ չեն անշուշտ, բայց որոնց տիրելու համար Օրմանեան սրբազանի հնարագէտ միտքը մէկ-մէկ բան մտածած ըլլալու է և պիտի գործադրէ աստիճանաբար։

Աստիճանին առաջին ոտքը Եգիպտոսն էր կերևայ։

—

Անոնցմէ չենք, որոնք իր պատրիարքութեան առաջին օրէն սկսեալ՝ նախատալից քննադատութիւններու առարկայ ըրած են Օրմանեան սրբազանի անձն ու գործունէութիւնը։

Ընդհակառակը, կարգ մը պարագաներու մէջ իր կողմէն նուազ թեթև ու աւելի կորովի քաղաքականութիւն մը փափաքած ըլլալով հանդերձ՝ ընդհանուր առմամբ մտածած ենք թէ, այս միջոցիս մանաւանդ, Պոլսոյ պատրիարքական աթոռը հեռու է վարդեայ անկողին մը ըլլալէ, որուն վրայ ընկողմանած՝ այժմու պատրիարքը իր քէֆին նայէր ու ուզածին պէս շարժէր։ Շատերու հետ խորհած ենք, թէ «Երկաթէ Պատրիարքէն» ետք «Եղէգէ Պատրիարքը» ժամանակին պահանջքն էր թերևս։

Ասոր համար ալ, ինքզինքնիս հիմա բոլորովին ազատ կը զգանք վճռապէս յայտնելու, թէ պատրիարքական գահէն կաթողիկոսական գահը բարձրանալու իր ջանքը հակազգային արարք մըն է հետևեալ պատճառներով։

Կաթողիկոս մը, որքան կարելի է, պէտք է վայելէ ամբողջ ազգին սէրն ու յարգանքը։ Պաշտօնին կրօնական և քաղաքական նուիրականութիւնը ատիկա կը պահանջէ և առանց այդ անհրաժեշտ պայմանին՝ կաթողիկոսութիւնը կը կորսնցնէ ամէն վարկ և հեղինակութիւն, ինչ որ կատարեալ աղէտ մըն է ազգին արդի վիճակին մէջ։ Ազգային գերագոյն հեղինակութիւնը, զոր էջմիածնայ կաթողիկոսը իր անձին մէջ կը մարմնացնէ, պէտք է հեռու մնայ կիրքերէ և ատելութիւններէ։

Ազգի մը գոյութեան շրջանին մէջ կը պատահի, որ իրեն թշնամի, իր վրայ տիրապետող ցեղին դէմ ըմբոստացման անյաջող փորձերէ ետքը՝ վայրկեան մը կէկին համակերպող քաղաքականութեան պէտքն զգացուի։ Իր պաշտօնական յարաբերութիւններուն մէջ ազգը կունենայ իր այդ քաղաքականութիւնը ներկայացնող պաշտօնական անձերը, որոնց թերևս նաքէն՝ պատմութիւնը արժանաւոր տեղ պիտի յատկացնէ իր էջերուն մէջ։ Բայց երբէք, այնքան ատեն, որ թշնամւոյն լուծը կայ ու կը մնայ իր վզին, ազգը չի կրնար զանոնք վարձատրել, որովհետև առով ինքնիրեն ոտնակոխ ըրած կըլլայ զինք կենդանի պահող ոգին, հերքած կըլլայ ազատութեան իրաւունքը։

Ազգը, կաթողիկոսական ընտրութեանց ներկայ պարագային, ունի իր կողմէ միահողոյն որոշուած իր ընտրելին։ Իզմիրլեան սրբազան, վերոյիշեալ նկատումներուն ճիշդ հակառակ նկատումներով, մարմնաւէկ կը ներկայացնէ հայութեան ոգին, որ ընկճուած թէկէտ՝ բայց երբէք մեռած չէ։ Վարձատրելով զանի՝ ազգը միանգամայն ինք իր վրայ իր անշէջ հաւատքը յայտնած կըլլայ և Դժբաղդ Կորովին՝ մատուցած արժանի յարգանքը։ Հայրիկ հազիւ միայն քանի մը տարի Երուսաղէմի աքսորին մէջ մնաց։ Իզմիրլեան սրբազան տասներկու տարիէ ի վեր կը հեծէ այդ նոյն տեղը և Օրմանեան պատրիարքի թեկնածութիւնը կաթողիկոսական գահուն՝ կը նշանակէ պարզապէս իր նախորդին կապանքները պրկել և սեղմել...

Վահան Թէքէեան

(«Լուսաբեր»)

Ա. ԼԻՍՕՎՍԿՈՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Մարտի 22-ին արքունական թատրոնում Ա. Լիսօվսկին կարդաց իր երկրորդ դասախօսութիւնը՝ «XIX դարի գրականութեան էվօլիւցիայից»։

Առաջին դասախօսութիւնը, որի մասին մենք անկարող եղանք ժամանակին ծանօթութիւն տալ, վերաբերում էր «Հիասթափութեան շրջանին»։ Դասախօսը համառօտ կերպով բնորոշելով այդ շրջանի ֆրանսիական հանճարը և նրա դերը մարդկութեան պատմութեան մէջ, ցոյց տուեց նրա երկու հոսանքների արտայայտութիւնները գրականութեան մէջ. մի կողմից՝ Գեօթէի Վերթերը, Շատօբրիանի Րէնէն և Բայրօնի Չայլդ Հարօլդը, իբրև աւագ սերնդի ներկայացուցիչ՝ հիասթափւող հերոսներ, իսկ միւս կողմից՝ Բայրօնի Դօն-Ժուանը, Գեօթէի Ֆաուստը և Միցկևիչի Պան Տադէուշը, իբրև հիասթափված հերոսների մատաղ սերունդներ։

Այդ արտայայտութիւնները իրանց վրա կրում են ժամանակակից յոռի մտածողութեան ու նրա տրամադրութիւնների դրօշմը։

Քաղաքական անձուկ պայքարի արդիւնքը երևում է ահա վհատութեան և հիասթափութեան այդ շրջանի մէջ, որտեղ միաձուլվում են ի վերջոյ ռոմանտիքական և սանտիմենտալ էլեմենտները։

Դրանով վերջանում է հիասթափութեան շրջանը և սկսվում է վերածնութեան [illegible]։

«Վերածնութիւնը» նրա երկրորդ դասախօսութեան նիւթն էր, որ տեղի ունեցաւ մարտի 22-ին։

Ժամանակակից ոգին վհատութեան ու հիասթափութեան ճիրաններից ազատելու համար, կարծես, երևան է գալիս բանաստեղծ Հէնրիխ Հէյնէի պատմական ինտերմեցիան, նրա քաղցր երգերն ու վառ յոյսերը բաղդաւոր կեանքի ու ազատութեան համար։ Բայց Հէյնէի երկերի մէջ կարմիր թելի նման անցնում են երկու հակառակ տարրեր—անհատական ու հասարակական։ Այդ է պատճառը, որ նրա ստեղծագործական մեծ հանճարը այնուամենայնիւ ոչինչ վերջնական չէ տուել. սիրոյ և կեանքի այդ երկու հակառակ ակորդները համարեա ոչնչացնում են իրար։ Այդ հանգամանքը Հէյնէն ինքն էլ ակնարկում է իր ճանապարհորդական տպաւորութիւններից մէկի մէջ։ Սակայն այդ բոլորը իր հիմնականում համապատասխանում է իր դարաշրջանի տրամադրութեան։

Բայց այդ ինտերմեցիային յաջորդում է պօզիտիվիզմը—դրական փիլիսօփայութիւնը, որ իր ազդեցութեանն է ենթարկում բոլոր հաստատութիւններն ու հասարակական կեանքը։ Նրա ամենատաղանդաւոր ներկայացուցիչը Օգիւստ Կօնտն էր, որ իր 30 տարւայ մտաւոր գործունէութեամբ նոր լօզունգ տուեց պօզիտիվիզմին, կազմելով գիտութիւնների կլասիֆիկացիան, աւելացնելով նրա վրա սօցիօլօգիան իբրև մարդկային կեանքը բարելաւելու բարձրագոյն նպատակը և ընդհանրացնելով նրան։

Այնուհետև պօզիտիվիզմը գիտութիւնից անցնում է կեանքի և գեղարուեստի մէջ, ազդում է գրականութեան վրա։ Վերջինս իրան նպատակ է դնում մաքառելու մարդկութեան թշուառութեան ու նրբան հիւծող չարիքների դէմ։ Վիկտոր Հիւգօն, Դիկկէնսը և Շպիլհագէնը իրանց երկերի մէջ քննութեան նիւթ են դարձնում այդ խնդիրները և աշխատում են առաջարկել միջոցներ այդ չարիքները վերացնելու և մարդկային կեանքը բարելաւելու համար։

Հիւգօն, օրինակ, առաջարկում է իբրև միջոց դպրոցը և տրիբունան։ Անգլիական մեծ ռոմանիստ Դիկկէնսը իր բազմահատոր երկերի մէջ դատապարտում է գոյութիւն ունեցող հասարակական միջոցները։ Նա կարծում է, որ մարդը ծննդից ունենում է լաւ ու վատ կողմեր, տգեղութիւն և գեղեցկութիւն, և ահա կեանքը դրանցից մէկին ույժ է տալիս, իսկ միւսին ոչնչացնում։ Բայց նա ինքն էլ միջոցներ չէ առաջարկում։

Հեղինակը դրանով հնարաւորութիւն է տալիս կամ գրգռում է ընթերցողին մտածել այդ խնդիրների մասին և վարվել այնպէս, ինչպէս իր սիրտն ու խիղճն է թելադրում։

Շպիլհագէնը «Одинъ въ полѣ не воинъ» գրուածքի մէջ պատասխանում է ժամանակակից մտքերը զբաղեցնող այդ հարցերին։ Նա համոզված է, որ լուսաւորելով ժողովուրդը, զարգացնելով կուլտուրան, կարելի է բուժել այդ ցաւերը։ Այդ վէպի արժէքը կայանում է նրանում, որ նա դուրս է բերում Ֆերդինանդ Լասսալի պատմական գործունէութիւնը։

Դրանց հիման վրա դասախօսը գալիս է այն եզրակացութեան, որ ժամանակակից սօցիալիստական շարժումը սկսել է ըմբռնել իր կոչումը։ Պօզիտիվիզմը կոչ է անում «բոլոր երկիրների բաղդաւորներ ու անբաղդներ, միացէք», և դա պէտք է վերացնէ պրօլետարների ներկայ աղաղակը՝ «պրօլետարներ բոլոր երկիրների, միացէք»։

Այդպիսով 19-րդ դարի մեծ հաւաքական կազմակերպված կամքը և բանականութիւնը հիմք դրեց նոր ազատագրական շարժման, որը 100 տարուց յետոյ զարթնում է իր արևոտ շողերով։

Վերջում դասախօսը կանգ առաւ Նիցշէի և Տօլստօյի վրա։ Բնորոշելով մէկի փիլիսօփայութիւնը իբրև խաւար, սարսափելի գիշեր, իսկ երկրորդինը՝ իբր պայծառ շողերով։

Ունկնդիրները ծափահարութեամբ շնորհակալութիւն յայտնեցին դասախօսին։

Լ. Դ.

ԱՐՓԻԱՐԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

—

Ստացանք.—1) Թիֆլիսում, պ. Ա. Ճանպէտէնեանից՝ 5 ր., 2) Բագուից—Գարեգ. քահ. Ղուկասեանից՝ 1 ր., Սողոմոն Ծուրինեանից՝ 5 ր., բժշկապետ Մակարեանից՝ 3 ր., Անուշաւան Քալանթարից՝ 3 ր., Յարութիւն Ալչէճեանից՝ 3 ր., գումարն է 20 ռուբլի, որը նախկին ստացվածների հետ (Մշակ» № 66) կանէ 254 ռուբլի։

ԴԱՐՁԵԱԼ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Արփիար Արփիարեան)

VI *)

Ինչպէս տեսան ընթերցողները մեր պատմութեան սկզբում, Արփիարը (կարող եմ ասել՝ Թիւրքահայերից և շատ շատերը) հնչակեան կուսակցութեանը մտնելով ու նրա մէջ մնալով, շատ էլ չէր համակրում այդ կուսակցութեան ամբողջ ծրագիրը։ Մանաւանդ չափազանց խորթ էր Թիւրքահայերին այդ ծրագրի առաջին՝ սօցիալիստական բաժինը։ Եւ դա շատ հասկանալի է. մի երկիր, որտեղ չը կայ ոչ կապիտալիզմ, ոչ խոշոր արդիւնագործութիւն և ոչ էլ եւրօպական իմաստով բուրժուազիա ու պրօլետարիատ, որտեղ տնտեսական հին հիմքերի տապալողը եւրօպական կապիտալիզմն է, և այն էլ շատ աւելի Եւրօպայից բերված պատրաստի ապրանքները, որոնք Թիւրքական յոռի կառավարութեան հետ միասին քայքայելով, տակն ու վրա անելով Թիւրքիայի մանր տնտեսութիւնը, այնտեղ միմիայն պաուպերիզմ են ստեղծում և գաղթականութիւն առաջացնում, այդպիսի մի երկրում, ասում ենք, սօցիալիզմի մասին խօսելը ու սօցիալիզմի համար ադեպտներ՝ կողմնակիցներ գտնելը զարմանալի պիտի լինէր ու պիտի լինի։

Բացի դրանից, ինչպէս յայտնի է, հայկական շարժումները նպատակ ունէին միայն եւրօպական պետութիւնների միջամտութեամբ ազատութիւն, ռեժիմի փոփոխութիւն ձեռք բերել Թիւրքիայի այն մի փոքրիկ մասում ապրող ժողովուրդների և մասնաւորապէս հայերի համար, որ հին Հայաստանն է կազմում և որին էլ վերաբերում է Բերլինի դաշնագրի խաբուսիկ 61-րդ յօդուածը։ Այլ խօսքով՝ հարցը իր ամբողջ էութեամբ և հիմնովին զուտ ազգային բնաւորութիւն էր կրում, հետևապէս նա չէր կարող միևնոյն ժամանակ և դասակարգային բնաւորութիւն ստանալ։

Զարմանալի չէ ուրեմն, որ հնչակեան կուսակցութեան մէջ մտնողները, մանաւանդ Թիւրքահայերը, այդ կուսակցութեան ծրագրից ընդգրկում էին միմիայն նրա ազգային, եթէ չասենք ազգայնական բաժինը, առանց մի առանձին կարևորութիւն տալու նրա առաջին՝ սօցիալիստական բաժնին։ Այս վերջինը մի տեսակ խորթ զաւակ էր Թիւրքահայ և ռուսահայ հնչակեաններից շատերի համար, որոնք ամենայն ուրախութեամբ դուրս կը շպրտէին նրան, եթէ միայն մի կողմից վստահ լինէին թէ իրանք մեծամասնութիւն են կազմում կուսակցութեան մէջ, իսկ միւս կողմից՝ եթէ այդ մասին երկար մտածելու ազատ ժամանակ գտնէին, որովհետև յեղափոխական աշխատանքը այնպէս էր եռում, դէպքերը այնպիսի արագութեամբ էին միմեանց յաջորդում, որ թէօրիական հարցերով զբաղվելու բոլորովին ժամանակ չը կար։ Մանաւանդ որ հէնց այդ ծրագրի հեղինակներն էլ վաղուց արդէն մոռացել էին այդ ծրագրի առաջին բաժինը և գործնական կեանքի մէջ ամենապարզ նացիօնալ-դեմօկրատիզմից հեռու չէին գնում։

Բացի հնչակեան կուսակցութեան ծրագրի սօցիալիստական բաժնին հակառակ լինելը, Արփիարեանը, ինչպէս նոյնպէս տեսան մեր ընթերցողները, յեղափոխական գործերի մէջ խառնվելով ու հնչակեան կուսակցութեան մէջ մտնելով, հէնց սկզբից և այն ձգտումն ու հակառակութիւնը ունէր, որ, եթէ ոչ ամբողջ հնչակեան կուսակցութեան, գոնէ Պօլսի վարչական գործերի ղեկը իր և իր պօլսեցի ընկերների ձեռքում գտնվի։ Երբ այդ նրան չյաջողվեց և երբ նա տեսաւ ու համոզվեց, որ Թիւրքահայ գաւառացիների մէջ էլ պօլսեցիներից ոչ պակաս «ինթելիժան» ու «չէնքով-շնորքով տղաքներ» կան, նա դադարեց այլևս արհամարհել գաւառացիներին։ Ընդհակառակը՝ այդ ժամանակ նա գալիս է այն համոզման, որ շատ աւելի լաւ է, հէնց այդ գաւառացիների հետ միանալով, ամբողջ կուսակցութեան ղեկը իրանց ձեռքն առնեն, որպէսզի Թիւրքահայերի սեփական գործը հէնց իրանց Թիւրքահայերի ձեռքով վարվի։

Միշտ այդ իմաստով և ուղղութեամբ նա մի ծրագիր ու կանոնադրութիւն է մշակում ու ներկայացնում Պօլսի հնչակեան վարչութեանն ու շրջանային մասնաճիւղերին, (ծրագրից դուրս էր գցված և սօցիալիզմը), դաշնակցականների իր դէմ կատարած սպանութեան փորձից յետոյ, երբ, ինչպէս ասացինք նախորդով, Արփիարի վարկը արդէն սաստիկ բարձրացել էր հնչակեան շարքերում, մանաւանդ Պօլսում, ուր նա այդ ժամանակ կուսակցութեան գործերը համարեա թէ ամբողջապէս իր ձեռքն էր առել։

Մասամբ Արփիարի ազդեցութիւնը խիստ մեծանալուց վախեցած, մասամբ էլ «կենտրոնի» նախազգուշացումներից դրդված, Պօլսի վարչութեան այն անդամը (սրա անունը ընկերներից մէկը յիշեցրեց. ոչ թէ Պետրոս էր, ինչպէս ասել էի ենթադրաբար, այլ Աղասի), որը Արփիարին կօպտացիա էր արել ու վարչութեան մէջ մտցրել, սկսում է Արփիարի դէմ բացարձակ կերպով մաքառել ու նրա ամեն մի քայլին հետևելով, շարունակ տեղեկագրութիւններ հաղորդել «կենտրոնին» նրա գործունէութեան մասին։ Նա տեղեկացնում է կենտրոնին նաև Արփիարի մշակած ու ներկայացրած վերոյիշեալ ծրագրի մասին։

Այդ տեղեկագրութիւնները, շատ պարզ է, սաստիկ վատ են տրամադրում կենտրոնը դէպի Արփիարը, որը իր հերթին, լսելով կենտրոնի այդ վատ տրամադրութիւնը, նոյնպէս վատ է տրամադրվում դէպի նա։

Բայց այդ դեռ բաւական չէ. մի այլ պարագայ գալիս է և վառված կրակի վրա իւղ է լցնում։ Պօլսում Աղասին ձերբակալվում է։ Եւ ահա նրա ընկերը, Բէնիամին անունով, նամակ է գրում կենտրոն այդ ձերբակալութեան մասին և վստահ ոճով յայտնում է, թէ Աղասու ձերբակալվելը Արփիարի մատնութեան հետևանքն է, որ իբր սա այդ արել է մի ինչ-որ հայ կնոջ միջոցով (նամակի մէջ կնոջ անունը կար), որը Նազիմ փաշայի հետ մտերմական յարաբերութիւնների մէջ էր։ Բացի դրանից, Բէնիամինը գրում էր, որ Աղասու մօտ գտնված կուսակցական 15 հազար ոսկին (Աղասին վարչութեան գանձապահն էր) անցել է Արփիարեանի ձեռքը, որ այժմ ուրանում է և չէ ուզում տալ վարչութեանը։

Հասկանալի է, թէ դէպի Արփիարը առանց այդ էլ վատ տրամադրված կենտրոնի վրա ինչպիսի ազդեցութիւն պիտի գործէր այդ նամակը, որ, ի հարկէ, հալած իւղի տեղ էր ընդունվել։ Կենտրոնը ամեն կերպ աշխատում է Արփիարին հեռացնել տալ Պօլսի վարչական գործերից և նրանից՝ 15 հազար ոսկին է պահանջում։ Բայց Արփիարի դիրքը արդէն բաւական ամրացած է և կենտրոնը անզօր է հանդիսանում։ Աղասու ձերբակալվելուց յետոյ, կենտրոնի հաւատարիմ գործակալը դառնում է այդ Բէնիամինը։ Սակայն մի չարաբաստիկ պատահար էլ աւելի է բորբոքում սկսված հրդեհը. Բէնիամինը շուտով սպանվում է։ Թէ ինչպէս և ինչ հանգամանքների մէջ է տեղի ունենում այդ սպանութիւնը, չը գիտեմ։ Կարող էր, անշուշտ, պատահել, որ նա սպանված լինէր ոստիկանների կամ զինուորների ձեռքով։ Բայց կենտրոնի կասկածը իսկոյն Արփիարեանի վրա է ընկնում։

«Աղասուն մատնողն ու կուսակցութեան փողերը իւրացնողը, անշուշտ, կարող էր և Բէնիամինին սպանել տալ»։

Այդպէս է մտածում կենտրոնը։

Խ.-Ակատ

---

*) Տես «Մշակ» № 57.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

—

Շաբաթ երեկոյեան, մարտի 22-ին, Թիֆլիսի բօրսայի շինութեան մէջ կայացաւ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը, 67 անդամների ներկայութեամբ։

Նախագահութեան համար առաջարկվեցին պ. պ. Լէօ և Ա. Քալանթար. գաղտնի քուէարկութեամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց Ա. Քալանթար, իսկ քարտուղար՝ Ս. Եսայեան։

Օրակարգով ընդհանուր ժողովը առաջինը լսեց խորհրդի զեկուցումը՝ Արէշեանի տունը վերաշինելու մասին։

Ցանկանալով լաւագոյն կերպով շահագործել այդ շինութիւնը ընկերութեան կարևորագոյն նպատակների համար, խորհուրդը ամենից առաջ կանգ է առնում կենտրոնական հայկական գրադարանի վրա. մանաւանդ որ ներկայումս ընկերութիւնը իր ձեռքի տակ ունի խոշոր քանակութեամբ կովկասագիտութեան վերաբերեալ հեղինակութիւններ, իսկ բացման օրից էլ շարունակ մեծ քանակութեամբ գրքեր են ստացվում իբրև նուէր։ Գրադարանին կից կը լինի մի ընթերցարան ևս, ուր կը տեղաւորվեն մօտ 250 հոգի։ Գրադարան-ընթերցարանը զետեղելով նոր շինութեան (էլեկտ. լուսաւորութիւն) վերին յարկում, ներքին յարկը խորհուրդը կարող է վարձով տալ զանազան հաստատութիւնների և անձերի։ Շինութեան ամբողջ ծախքը, թէև խորհրդի անդամ ճարտարապետ պ. Լեօնցեանի նախահաշւով 19,350 ռուբլի է, խորհուրդը, կարելի կրճատումները անելով, որոշում է 15,000 ռուբլի։

Իսկ թէ որտեղից է ծախսվելու այդ գումարը, խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեան կարդում է իր անունով ստացված մի նամակ, որով Պետրովսկի վաճառական Ալէքսանդր Խաչատրեան Ղարաջեանց, իմանալով որ ընկերութիւնը որոշել է կառուցանել նոր շինութիւն, իր կողմից նուիրում է 15,000 ռուբլի։

Պ. Յարութիւնեան բերանացի զեկուցեց յիշեալ պարոնի մի շարք բարերարութիւնները։ Այսպէս օրինակ՝ նա երկու տարի շարունակ ամսական 60 ռուբլի է ուղարկել վարչութեանը 20 աշակերտի ձրիաբար ճաշ տալու և ամեն անգամ էլ չէ յայտնել իր ազգանունը համեստութիւնից դրդված։ Վերջին նամակից միայն պարզվում է նրա ով լինելը։

Խորհուրդը գնահատելով պ. Ղարաջեանի անկեղծօրէն բարեգործական ընկերութեան նպաստելը և մանաւանդ վերջին նուիրատուութիւնը, իր նիստում միաձայն որոշել է՝ 1) նոր շինութիւնը անուանել Ղարաջեանի անունով, 2) նրան ընտրել ընկերութեան պատւաւոր անդամ և 3) կախել նրա պատկերը ապագայ շինութեան դահլիճում։

Ընդհանուր ժողովը միաձայն, բուռն ծափահարութեամբ, հաստատեց Խորհրդի որոշումները։

Այնուհետև քննութեան դրվեց դերասան Ադամեանի իրեղէնները դրամ. ընկ. վարչութեանը յանձնելու հարցը։

Հանգուցեալ դերասանի իրեղէնները նրա մահվանից յետոյ պահվում էին պ. Ալէքսանդր Ստեփանեանի մօտ։ Վերջինս բոլորը մի առանձին ցուցակով (328 իր) նուիրել է վաղուց բար. ընկերութեան։ Այժմ դրամ. ընկ. վարչութիւնը, պատճառաբանելով որ աւելի նպատակայարմար է այդ իրերը պահվեն դրամ. ընկերութեան մօտ, մանաւանդ որ ինքը Ա. Ստեփանեանը դէմ չէ, խնդրում է յանձնել այդ իրերը իրան ի պահպանութիւն։ Դրամ. վարչ. կողմից պ. Ջաբար բացատրում է, որ դրամ. ընկ. այժմ վարձած ունի մի լաւ բնակարան և մտադիր է մօտիկ ապագայում մի մուզէում սարքել, որի մէջ, անշուշտ, առաջին տեղը կը գրաւեն Ադամեանի իրերը։

Մտքերի փոխանակութիւնից յետոյ, քուէարկութեամբ՝ 22 ձայնով ընդդէմ 18-ի, ժողովը որոշեց իրեղէնները առ այժմ պահել բարեգործ. ընկերութեան մօտ մինչև դրամ. ընկերութեան սեփական և յարմար շինութիւն ունենալը, երբ և կը յանձնվեն յիշեալ իրեղէնները նրան ի պահպանութիւն։

Երրորդ հարցը օրակարգով վերստուգիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնն էր։

Նախ քան ընտրութեան դիմելը, ընդհանուր ժողովի քարտուղարը կարդաց անցեալ ժողովի արձանագրութիւնը, որից երևաց, որ անցեալ անգամ վերստ. յանձնաժ. անդամների ընտրութիւնը չէ կայացել ինչ-ինչ տարաձայնութիւնների պատճառով, ուստի և առաջարկվում է կատարել նոր ընտրութիւն։ Ժողովականներից ոմանք գտան, որ արձանագրութիւնը ճիշտ չէ։ Ծագեց վիճաբանութիւն, որ երկար տևեց, ուստի և ժողովը ընդունեց պ. Հ. Առաքելեանի առաջարկը՝ թողնել այդ հարցի քննութիւնը հերթական ընդհանուր ժողովին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Աշտարակ, 10 մարտի

Կարդալով «Մշակի» № 43-ում այն ուրախալի լուրը, որով կազմված է Բագւում մի ընկերութիւն 100,000 ռուբլի դրամագլխով էջմիածնապատկան հողերը ոռոգելու համար, մեծ ուրախութիւն պատճառեց. բայց աւելի ուրախալի կը լինէր մեզ համար, որ այդ ձեռնարկված նպատակից զուրկ չը մնային և այն ջրազուրկ գիւղերը, որոնց հողերի միջով պիտի անցնի այդ ջուրը, քանի որ նրանք ամառ ժամանակ ջրի սակաւութիւնից աւելի են նեղվում և նրանց ցանքերը աւելի փչացվում, քան էջմիածնի հողերի վրա ցանվածները։ Այդ հայաբնակ գիւղերից մէկն է Ալիբէգլուն։ Եւ ինքս այդ գիւղից լինելով, ինձ քաջ յայտնի է, թէ ինչպիսի անտանելի վիճակի մէջ են գտնվում գիւղացիները ջրի սակաւութեան պատճառով, ամառվայ կիզիչ արևգակի ժամանակ, ուր շատ անգամ մինչև անգամ խմելու ջուր չէ գալիս, և սահմանափակ ցանած փոքր մասից $1^1/_3$-ը հազիւ է ստացվում։ Գիւղացին գարունից սկսած ամբողջ ընտանիքով աշխատում է բամբակի, բաղի, բօստանի և այլ մշակութեան վրա. փորում, վարում, ցանում, ակօսում, քաղհանում է, և երբ հարկաւոր է մի ջուր ևս ջրել յուլիս կամ օգոստոս ամսին, արդիւնք ստանալու համար, իր ծախքերը ծածկել, պետական հարկ վճարել, ընտանիքը պահել, պարտքերի վաշխառուի ձեռքից իր օձիքն ազատել, ահաւասիկ այդ ժամանակ նրա դիմացը կանգնած է լինում չոր առուն, շրջապատված օրական 10—12 ընտանիքներով, որոնք ձեռքները ծալած, գլուխները կորցրած, ախ ու վաշով տնց են կացնում օր ու գիշեր, չոր ու սև քարերի վրա, յուսալով որ բաղդի բերմամբ ջուրը կարող է շատանալ և կամ անձրև գալ, և իրանց մասերը կը ջրեն ու երեխեքը կազատեն զրկանքներից։ Բայց երկինքը մնում է անողոք, ջուրը մնում է նոյն վիճակի մէջ, և փոխանակ անձրևի երկնքից կարծես կրակ է Թափվում և աղանձում խեղճ գիւղացու ամբողջ ընտանիքի յոյսը։ Եւ սակայն հողը արգաւանդ է, և եթէ բաւականաչափ ջուր ունենայ իր մշակութիւնները ջրելու, նա ոչ մի նեղութիւն չի քաշի։ Նա ունի աւելի քան 100 խալուար մշակելի հող, որից մի Թզաչափ նա չէ Թողնում առանց սևացնելու։ Բացի յիշեալ հողերը, Ալիբէգլուի և Էջմիածնի հողերի մէջ գտնվում է Քասախ գետի տաշտը, մօտ 50 խալուարի չափ. գետը ընթացքը փոխելով, այժմ աւազով և փոշիով համարեա բոլորովին լցված է, և ընդունակ է ամեն տեսակ մշակութեանց։ Ես քանիցս խօսել եմ գիւղացիներին այդ հարցերի առիթով. նրանք ուրախութեամբ կընդունեն ամեն մի պայման, եթէ իրանց հողերը ոռոգելու համար ջուր բերվի, այդ կը լինի արդիւնքից որոշ տոկոս ստանալ, թէ դեսեատինով ջրելու համար որոշ գումար վճարել։ Ուրախալի կը լինի, որ այդ ընկերութիւնը իր ծրագրից դուրս չը Թողնի այդ գիւղերը, որով ազատած կը լինի խեղճ գիւղացիներին իրանց քառորդ դարից աւելի ախ ու վաշից։

Յ. Այվազեանց

—

Ղափան, 18 մարտի

Մարտ ամսի սկզբից ի վեր եղանակները վատ էին. ամեն օր անձրև ու ձիւն էր գալիս, բայց մարտի 14—16-ին երեք օր շարունակ տեղացող ձիւնը նստեց 2 արշին բարձրութեամբ։

Նոր սկսված երկրագործական աշխատութիւնները ընդհատվեցին։

Ժողովրդի նեղ դրութեան մասին քանիցս գրված է, բայց կառավարչական փոխատուութեան կարիք ունեցող գիւղացիներին մինչև օրս ոչինչ չէ բաժանված։

Գիւղացին ամեն կողմից յոյսը կտրած՝ կէս գնով վաճառում է տնային իրեղէնները, երեխաներին սովից փրկելու համար։

Անասուններին կերակրելու համար շատ դժուարութեան մէջ են. խոտի, դարմանի արժէքները այս կողմերում չը լսված գնի են բարձրացել և կեր չէ ճարվում։ Անասունների կերի պակասութեան պատճառով կոտորած է սպասվում։ Շատ մարդիկ անասուններին կերակրում են գարով, Թեփով ու հացով։

Այստեղի շուկայում ցորենը ստացվում է Կարեագինի գաւառից։ Գետերի (Բարգուշատ ու Հաքարի գետերը) ջրերը աւելանալուց՝ երԹևեկութիւնը նուազում է, որի պատճառով ցորենի ու ալիւրի արժէքը Թանգանալու է, մանաւանդ գարնանային դաշտային աշխատանքները սկսած ժամանակը։ Եթէ գիւղացին հիմիկվանից փող ունենայ, կարող է համեմատաբար էժան գնով ձեռք բերել այդ կենսական մԹերքը։ Եթէ կառավարութիւնը կարիք ունեցող գիւղացիներին փոխատուութիւնը դրամով է տալու, այդ դէպքում ամենանպատակայարմար ժամանակը այժմ է։

Ահաւասիկ ներկայումս մեզանում գոյութիւն ունեցող կենսական մԹերքների գների ցուցակը. ցորենի պուդը՝ 2 ր. 50 կ., գարին՝ 1 ր. 60 կ., ալիւրը՝ 2 ր. 80 կ.,—3 ր., բրինձը՝ 3 ր., դարմանի պուդը՝ գնվում է՝ 1 ր.։

Ներկայումս կատարեալ ձմեռ է մեզանում։

Ի. Մելիք-Քարամեան

—

Տիկոռ գիւղ (Կաղզ. գ.), 14 մարտի

Այս տարվայ անբերրիութիւնից ժողովուրդը դառն աղքատութեան մէջ է. ամենուրեք տիրում է սաստիկ Թանգութիւն Թէ հացի և Թէ անասունների կերի, որոնք չը տեսնված բարձր գներով են ծախվում։

Շ. Տաթևեան

—

Կաղզուան, 19 մարտի

Կաղզուանից մօտաւորապէս մէկ վերստ հեռաւորութեան վրա, դաշտում, այսօր գտնվեց մի անյայտ Թուրք կնոջ դիակ՝ իր երեք-չորս ամսական երեխայի հետ, որը նոյնպէս սպանված է։

Կնոջ դիակի վրա նշմարվել են դաշոյնի 8 հարուածներ, իսկ երեխայինը՝ 5։ Սպանութեան շարժառիթը յայտնի չէ, ոճրագործը նոյնպէս։ Կասկածվում են տեղական պարսիկները։ Դիակների հետ վարվել են որպէս գազաններ։

Զախօ

—

Բելական, 15 մարտի

Այսօր այստեղ երևան հանվեց վրացի Տիտիկօ Գելաշվիլիի դիակը։ Սպանվածը Լագօդեխ էր գնում։ Նրան տարել են անտառ ու սպանելով Թողել են այնտեղ։ Նրա դիակը 6—7 օր մնացել էր անտառում։ Ամբողջ դիակը յօշոտված էր գազաններից և մնում էր միայն գլուխը։ Չարագործները անյայտ են։ Առայժմ ոչ ոք չէ ձերբակալված։

Սամսոն Հայրապետեան

ԺՈՒՐՆԱԼԻՍՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, մարտի 23-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան դահլիճում կայացաւ տեղական ժուրնալիստների և գրողների ընդհանուր ժողովը, մասնակցութեամբ մօտ 45 հոգու. Նախորդ ժողովների նախագահ պ. Հ. Առաքելեան, բանալով ժողովը, յայտնեց, որ օրակարգի խնդիրներն են. 1) քննել ապագայ ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը, 2) քննել, Թէ տեղական մամուլը ինչ կերպով մասնակցէ ռուսաց հռչակաւոր գրող Լեվ Նիկ. Տօլստոյի յօբելեանին, և առաջարկեց ընտրել այս անգամ մի ուրիշ նախագահ։ Առաջարկվեցին պ. պ. Հ. Առաքելեան, Ստ. Լիսիցեան և Ա. Աթանասեան։ Առաջինները հրաժարվելով, ընտրվեց պ. Ա. Աթանասեան, իսկ քարտուղար՝ պ. Պիճիկեան։

Հ. Առաքելեան զեկուցեց համառօտ կերպով մինչև այդ եղած որոշումները, որոնք կայացված են փետրվարի 10-ին, 22-ին և մարտի 9-ին իր նախագահութեամբ եղած ժողովներում։ Ապա նա յայտնեց, որ մասնաւոր կերպով տեղեկացել է, Թէ ժուրնալիստների մի խումբ, առանց սպասելու այսօրվայ ընդհանուր ժողովին, որին նրանք մասնակցել են, իրանք մշակել են մի կանոնադրութիւն և ներկայացրել նահանգապետին ի հաստատութիւն։ Յայտնվեց, որ այդ անձինքն են Ղարիբի, Պիճիկեան, Լ. Նազարեան, Գօմարտելի, Լ. Մեհրաբեան, Շեստօվ և Կանչեր. սակայն վերջին երկուսը ապա յետ են վերցրել իրանց ստորագրութիւնը։ Այս յայտարարութիւնը սաստիկ վրդովեցրեց ժողովականներին, որոնք գտան այդ ժուրնալիստների վարմունքը անկօրրեկտ և ոչ-էԹիքական։ Եղան առարկողներ՝ յայտնել նրանց յանդիմանութիւն, առաջարկել նրանց հրաժարվել իրանց անճատ քայլերից։ Երկար վիճաբանութիւնից յետոյ, ժողովը 23 ձայնով ընդդէմ 6-ի և 9 ձեռնպահների կայացրեց հետևեալ որոշումը.

«Քննելով մի քանի ժուրնալիստների վարմունքը, որոնց անունները յիշված է „Наша Жизнь"-ի № 1-ում, և գտնելով այդ վարմունքը հապճեպ և ոչ-էԹիքական, մանաւանդ նրանից յետոյ, երբ նրանք մասնակցել են ընդհանուր ժողովում նախնական խորհրդակցութեան, կանոնադրութեան մշակման մասին, ժուրնալիստների ընդհանուր ժողովը, 1908 Թ. մարտի 23-ին, որոշեց անցնել հերԹական հարցերին»։

Այս որոշումից յետոյ այդ անկօրրեկտ վարմունքը իրանց Թոյլատրողներին մնում էր միայն հեռանալ ժողովից, որ և նրանք կատարեցին։ Ի միջի այլոց Լ. Նազարեան, Թոյլ տալով իրան ժողովականների հասցէին մի վիրաւորական ակնարկ, անդամներից մինը, Շեստօվ, յայտնեց, որ Նազարեանի վարմունքը աւելի վատԹար է, քան Պուրիշկևիչի վարմունքը Պետական Դումայում։

Այս միջնադէպից յետոյ ժողովը անցաւ քննելու ապագայ կանոնադրութեան ծրագիրը։ Խնդիրը կարելի էր որոշված համարել, եԹէ միայն ժողովի վերջում մի նոր առաջարկ գժտութիւն չը ձգէր ժողովականների մէջ։ Մի քանի անձինք առաջարկեցին մտցնել կանոնադրութեան մէջ մի կէտ, Թէ լրագիրների խմբագիրները, եԹէ միևնոյն ժամանակ հրատարակիչներ են, չեն ընդունվում իբրև անդամ, նայելով խնդրի վրա աշխատանքի և կապիտալի տեսակէտից։ Եղան առարկողներ, և ամենայն իրաւամբ, Թէ այդ դէպքում, օրինակ հայ և վրացի մամուլի աշխատաւորները պէտք է չը մասնակցեն այդ ընկերութեան, քանի որ հայ և վրացի խմբագիրները ըստ մեծի մասին և հրատարակիչներ են, և հրատարակչութիւնը չը պէտք է ծառայէ պատճառ չընդունելու այդպիսիներին, քանի որ նրանք ըստ պրօֆեսիայի ժուրնալիստներ են։ Սակայն, մի քանի խմբագիր-հրատարակիչներ հեռացած լինելով ժողովից, խմբագիր-հրատարակիչներին չընդունելու առաջարկը անցաւ շատ Թոյլ մեծամասնութեամբ, 17 ձայնով ընդդէմ 14-ի, որից յետոյ պարզվեց այն հանգամանքը, Թէ ժուրնալիստների մի ամբողջ խումբ ստիպված կը լինի իր համար առանձին ընկերութիւն ստեղծել։

Շնորհիւ ժողովականների մի քանիսի այդ անտակտ և անհեռատես քայլի, ժուրնալիստների ժողովը, որ սկսել էր իր գործը այնքան համերաշխութեամբ, այժմ բաժանվեց երեք խմբի և դժուար Թէ հնարաւոր լինի առայժմ գոնէ կազմել այն ընկերութիւնը, որ իրանց նպատակ էին դրել՝ կազմելու ժուրնալիստները։

Ժողովի շարունակութիւնը յետաձգվեց յաջորդ կիրակի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այսօր, Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովի օֆիցերական ծառայութեան 50-ամեայ յօբելեանի պատւին Վրաստանի և ԻմերէԹիայի Թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի կարգադրութեամբ, ամբողջ Թեմում դպրոցական պարապմունքներ չեն լինի։

◆ Բացի այն բոլոր հաստատութիւններից և ընկերութիւններից, որոնց մասին հետզհետէ տեղեկութիւն տրվեց մամուլում, այսօր, Փոխարքայի յօբելեանը շնորհաւորելու համար, պալատ են գնալու հետևեալ հաստատութիւնների պատգամաւորութիւնները. Թիֆլիսի մահմեդական ինտելիգենցիայի կողմից՝ որ վճռել է նաև երկու Թոշակաւորներ պահել մահմեդական օրիորդաց ապագայ դպրոցում, Թիֆլիսի մանր առևտրականների կողմից, կովկասեան ճան. հաղորդակց. շրջանի ծառայողների կողմից, կենդանիներին հովանաւորող Թիֆլիսի ընկերութեան կողմից, Թիֆլիսի նահանգի ազնուականութեան կողմից՝ որ կոմսին մատուցելու է մի հինաւուրց Թուր, կովկասագիտական բարձր դասընԹ. կողմից (Գ. Սմիրնօվ), Փոխարքայի դիւանատան տպարանի ծառայողների կողմից, Թիֆլիսի մօլօկանների կողմից՝ որ մատուցելու է աւետարան, Թիֆլիսի ժողովարանի կողմից՝ որ վճռել է Փոխարքայի պատկերը կախել ժողովարանի դահլիճում և կոմսին ընտրել է ընկերութեան պատուաւոր անդամ և այլն։

◆ Այսօր, մարտի 25-ին, Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովի յօբելեանի օրը, պալատում պատգամաւորների ընդունելութիւնը կը սկսվի առ. ժամը 11 և կէսից, պալատական եկեղեցում պատարագը և մաղԹանքը վերջանալուց յետոյ։ Պատգամաւորների ընդունելութիւնից յետոյ տեղի կունենայ նախաճաշ à la ֆուրշէտ։ Պատգամաւորութիւնները պալատ են մտնելու հիւսիսային դռնից։

◆ Կովկասեան կայսերական ռուսական տեխնիքական ընկերութիւնը իր վերջին նիստում միաձայն որոշել է Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկօվին ընտրել ընկերութեան պատուաւոր անդամ։

◆ Որովհետև այսօր Կովկասի Փոխարքայի առաջ զօրքերը սահմանված կարգով անցնելու ժամանակ՝ զինուորական պաշտօնեաները շարունակ ձիերով արշաւելու են, ձիերից վայր ընկնելուց խուսափելու համար, Թիֆլիսի կոմենդանտը դիմել է քաղաքային վարչութեան, խնդրելով կարգադրութիւն անել, որ աւազ ցանվի Գօլօվինսկի պրօսպեկտից, զինուորական տաճարի բակի դռների մօտից մինչև պալատի հիւսիսային անկիւնը։

◆ Թիֆլիսի նահանգապետը հնարաւոր չէ գտել հաստատել «Թիֆլիս քաղաքի և Թիֆ. նահանգի ուսուցիչների և վարժուհիների ընկերութեան» կանոնադրութիւնը։

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահը Կովկասի Փոխարքայի անունով տուած խնդրագրով 4184 րուբլի է խնդրում զէմստվային գումարներից՝ Թիֆլիսի այգեգործական դպրոցի պահպանութեան համար։

◆ Կիրակի, մարտի 22-ին, կայացաւ Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Դ. Վ. Բեզօբրազօվի։ Սկզբում հաստատվեց 1907 Թ. հաշիւը։ Ընդհանուր ժողովին առաջարկվեց տալ ծառայողներին, անցեալ տարիների պէս, 5200 րուբլի դրամական պարգևներ։ Որպէսզի այդ առաջարկը շարունակ ընդհանուր ժողովների քննութեան առարկայ չը դառնայ, պ. Ալ. Խատիսեանը առաջարկեց մտցնել այդ պարգևների գումարը նախահաշուի մէջ մի անգամ ընդմիշտ, որով ձայների մեծամասնութեամբ պ. Խատիսեանի առաջարկը անցաւ։ Ապա կարդացվեց 1908 Թուի նախահաշիւը, որը կազմում է 69,000 ր. (պարգևները հետը հաշուած), որը և ընդունվեց։ Պատգամաւորական խորհրդի անդամ Վեյդենբաումը չը ցանկանալով վերընտրվել, նրա փոխարէն ժողովը ընտրեց Ա. Ն. Շաղինօվին։ Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին Գ. Ա. Էբեր, Ս. Ս. Ստեփանեան և Ա. Ա. Տէր-Աբրահամեան և փոխանորդ՝ Վ. Գ. Կանդուրալօվ։

◆ Մարտի 20-ին Անդրկովկասի մուֆԹիի մօտ կայացաւ Թիֆլիսի մահմեդական ինտելիգենցիայի ժողովը՝ մահմեդական ապագայ դպրոցի համար հողաբաժին գտնելու մասին խորհրդակցելու նպատակով։ Ժողովում պարզվեց, որ Բագուի նաւԹարդիւնաբերող Շամսի Ասադուլլաևը նուիրում է 60—70 հազար րուբլի՝ մի շէնութիւն կառուցանելու մահմեդական ապագայ օրիորդաց ուսումնարանի համար, իսկ հողաբաժին գնելու համար անհրաժեշտ է 10—15 հազար րուբլի։ Այդ պատճառով, ժողովը որոշեց միջնորդութիւն յարուցել կովկասեան գլխաւոր իշխանութեան առաջ, որ փոխադարձաբար 10—15 հազար րուբլի տրվի Թիֆլիսի մզկիԹի վակուֆային գումարներից՝ մի հողաբաժին գնելու մահմեդական ապագայ օրիորդաց դպրոցի համար։

◆ Մարտի 20-ին, Թիֆլիսի նահանգապետի Թոյլտուութեամբ, կայացաւ Թիֆլիսի էլեկտրաքարշի ծառայողների ժողովը ամառնային երԹևեկութեան հարցի մասին խորհրդակցելու համար։ Ներկայ էին մօտ 600 ծառայողներ. Ժողովում մատնանշվեց այն հարցը, որ ծառայողները դէմ չեն, որ վագոնների երԹևեկութիւնը սկսվի առ. ժամը 6-ից և վերջանայ գիշերվայ ժամը 1-ին, ինչպէս վարչութիւնն է ցանկանում. սակայն ծառայողները խնդրում են ծառայութեան կարգը Թողնել այնպէս, ինչպէս որ կայ, այսինքն ծառայողները առաջին անգամ փոխանակվեն (смѣна) առ. 6-ից մինչև ցեր. ժամը 2-ը, իսկ երկրորդ անգամ ժամը 2-ից մինչև երեկ. ժամը 10-ը, մնացած ժամանակում մինչև գիշերվայ ժամը 1-ը Թողնել լրացուցիչ վագոններ։

◆ Փաշաքենդցի երիտասարդներ՝ Աւագ Գէորգեան, Բիւնեաթ Պօղոսեան, Սեդրակ Գ. Գէորգեան, Գր. Սահակեան, Գր. Մանհտեսի-Սայադեան նուիրել են մի օրինակ «Մշակ» Սալմաստի Փաշաքենդ գիւղի «Րաֆֆի» գրադարանին։

◆ Թիֆլիսի քաղաքային տնտեսական մասնաժողովի վերջին նիստում որոշված է մի քանի մասնաժողովներ կազմել, որոնց կազմի մէջ կը մտնեն սանիտարական բժիշկը և առևտր-տնտեսական կառավարիչը, վերաքննելու այն ալիւրապահեստները, որոնք գոյութիւն ունեն Թիֆլիսում։ Վատ ալիւրը անմիջապէս ուղարկվելու է քաղաքային լաբօրատօրիան անալիզի համար, իսկ մեղաւորները ենԹարկվելու են խիստ պատասխանատուութեան։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակի պաշտօնեաները շանտաժիստներից սպառնական նամակ են ստացել, որով պահանջվում է, որ իւրաքանչիւր ծառայող վճարէ 25 րուբլի։

◆ «Ծննդկանների մի նոր կասսայի» յայտնագործում եւս։ Մարտի 21-ին Հաւլաբարում, Վարշամեանի Թատրօնի շէնութեան մէջ, կայացաւ Վաս. Ցացերօվի և նրա կնոջ ծննդկանների կասսայի անդամների ընդհանուր ժողովը։ Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումից երևաց, որ կասսան հաստատվել է 1907 Թ. հոկտեմբերին և դադարել է գործելուց այս տարվայ մարտի 5-ին։ Կասսայի անդամ գրվել են մօտ 759 հոգի, որոնք միասնաբար վճարել են 1604 րուբլի 90 կ. իսկ զանազան ժամանակ հետզհետէ անդամակցական վճար —66,644 րուբլի։ Այս գումարից 349 հոգու կրկնակի վճարած է ընդամենը 46,455 ր. 35 կ.։ Բացի դրանից կասսայի հիմնադիրները դիւանական ծախսեր կատարել են 1098 ր.։ Այժմ կանխիկ դրամ կայ 1405 ր., մինչ ընդհանուր 68,249 ր. 89 կ. մուտքից հանելով ընդհանուր 47,554 ր. 50 կ. ծախքը՝ մնում է 20,695 ր. 37 կ.։ Ժողովը յանձնեց վերաստուգիչ յանձնաժողովին կասսայի գործերը աւարտել։

◆ Ստացանք՝ Արշակ Չօպանեանի «ՔերԹուածներ» 1889—1907, Պարիզ, գինն է 5 ֆրանկ։

◆ Մարտի 22-ին, երեկոյեան ժամը 6-ին, 3 անյայտ չարագործներ բաց դռնից մտել են I արական գիմնազիան, նման բանալիով բացել են դիւանատունը, ուր կոտրելով դրասեղանի երկու արկղները՝ գողացել են երկու կնիք։ Արկղում եղած 95 ր. փողը և 3660 րուբլու պատրաստի տալօնը, նոյնպէս և երկաԹէ դրամարկղը փողերով և զանազան փաստաԹղԹերով լի անձեռնմխելի են մնացել։ Գիմնազիայի ծառայ Եփստ. Կորէջը, մտնելով դիւանատուն, նկատել է 3 չարագործներին, բայց այնպէս շփոԹվել է, որ ոչ ոքի չէ յայտնել. բացի դրանից, Կորէջի ասելով, չարագործներից մէկը, մօտենալով իրան, սպառնացել է ատրճանակով, եԹէ աղմուկ բարձրացնէ։ Չարագործներից երկուսը դիմակաւորված են եղել, իսկ երրորդը բաշլըղով։ Կասկածով ձերբակալված են գիմնազիայի դռնապան Տիմօֆէյ Բելօկրինիցկին և նրա օգնական Դաւիդօվը, որոնք, չը նայելով որ առանց հեռանալու պէտք է շարունակ գտնվեն գիմնազիայի դռան առջև, բացակայ են եղել երեկոյեան 3-ից մինչև 8 և կէս ժամը և չեն կարողացել բացատրել, Թէ որտեղ են եղել։ Քննութիւն է կատարվում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մարտի 23-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Մելիք-Բեկմիրեանի մսի խանութը (Դիդուբէ) մտել են 2 լեզգիներ և մահվան սպառնալիքով փող են պահանջել։ Տեսնելով որ խանութի շուրջը սկսել են հաւաքվել անցորդներ, լեզգիները, ոչինչ չը վերցնելով, սկսել են փախչել, բայց ոստիկանութիւնը ձերբակալել է նրանց։

◆ Մարտի 23-ին գաղտնի ոստիկանութիւնը ձերբակալել է երկու չարագործների, որոնք ռումբ են նետել բամբակի շարքում (ծածկած Բազարխանի մօտ)։ Ձերբակալվածներն են Գէորգի (Գիգօ) Նիկօլօվը և Նիկօլայ Քիտիաշվիլին, որոնց ականատեսները ճանաչել են, որ ռումբ նետողները դրանք են եղել Շալամօվի խանութի առաջ. բացի դրանից, քննութիւնից պարզվել է, որ այդ անձերը պարապում են էքսպրօպրիացիայով և դրամաշորԹութեամբ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Պետերբուրգից հաղորդում են „Каспій“ լրագրին, որ ռուսաց հոգևոր սինօդը մարտի 18-ի իր նիստում, «ռուս ժողովրդի միութեան» կողմից յարուցված միջնորդութեան համաձայն, որոշել է արգելել ամեն տեսակ Թատրօնական ներկայացումները տօն օրերի նախօրեակում։

◆ Ֆրանսիական ոստիկանութեան դիրեկցիան դիմում է արել Եւրոպայի գլխաւոր քաղաքներին առաջարկելով «էսպերանտօ» լեզուն դարձնել միջազգային ոստիկանական լեզու։ Մի քանի քաղաքներից, «Нов. Вр.» լրագրի ասելով, արդէն նպաստաւոր պատասխաններ են ստացվել։

◆ Բօյլերգում հրացանաձգութիւն է տեղի ունեցել նաւաստիների և ժանդարմների միջև։ Սահմանապահ «Կոնդոր» յածանաւի նաւապետը ծանր կերպով վիրաւորված է։

◆ Մոսկվայի խուզարկու ոստիկանութեան վարչութիւնը ներկայումս կարգադրել է, որ անցագիր չունենալու և փողոցում անկարգութիւններ անելու համար հայրենիք աքսորվողների լուսանկարները վերցնեն։ Այդպիսիների լուսանկարներից կը կազմվի խուլիգանների մի առանձին ալբոմ։ («Г. М.»)

◆ Մարտի 13-ին Պետերբուրգում կայացել է արհեստակցական միութիւնների կենտրոնական բիւրօյի ժողովը։ Ներկայ են եղել 22 միութիւնների ներկայացուցիչներ։ Կենտրոնական բիւրօյի յատուկ օրգանը ունենալու առաջարկը վճռված է մերժել։ Գործադրկութեան դէմ մաքառելու համար առանձին խորհրդաժողով կազմակերպելու հարցը, որ դրական լուծում էր ստացել անցեալ ժողովին, վերաքննութեան է ենԹարկվել։ Մեծամասնութիւնը այն միտքն է յայտնել, որ գործադրկութեան դէմ իրական կռիւ մղել անհնարին է։ («Русь»)

◆ Սօսնօվիցից հաղորդում են «Рѣчь» լրագրին, որ Վօսկովիցում սպանված է ռուս ժողովրդի միութեան տեղական բաժանմունքի նախագահը։

◆ Գօմելից մարտի 14-ին ադմինիստրատիվ կարգով աքսոր են ուղարկվել 10 գիւղացիներ, որոնց վրա կասկածում են, Թէ նրանք են հրդեհում գաւառում ռուս ժողովրդի միութեան պատկանող անդամների տները։ («Р. Вѣд.»)

◆ Դերժամօվկում հրդեհումից այրվել է տեղական ռուս ժողովրդի միութեան հարուստ անդամ Խարչուկի դաստակերտը։ Հրի ճարակ են դարձել հացահատիկների ամբարը, ծխախոտի պահեստները և 14 կովեր։ («Рѣчь»)

ԳԻՒՂԱԿԱՆ ՉԱՐԻՔՆԵՐ *)

(Նամակ խմբագրութեան)

—

Տասնեակներին վճռված գործի ամսաԹիւը, յետին Թուով, դնում են 10-ը, որպէսզի ինձ ուղարկված ծանուցագրի և վճռի ամսաԹւերին համապատասխանի։ Եւ այդպէս, օյինբազութիւններով, խղճի խայԹից զուրկ մեր դատաւորները վճռում են ստանալ ինձանից յօգուտ հասարակութեան 95 ր.։ Այդ բոլորը համեմում է, ի հարկէ, գրագիր Յ. Զարչեանը, որին հիւրի ներկայութեամբ իմ տնից վռնդել եմ Նրա՝ իմ սեղանից մի կաբոր Թուղթ գողանալու համար։

Պ. պ. դատաւորներ, ձեր արածին ժողովուրդը ասում է. «Ոյժը էշին չը պատեց, փալանին դմբեց», կամ «Ջորը գողանատեղ, աղուէսը բէգ»։ Պ. Գալուստ, եԹէ դուք ճարպիկ էք իմ բոժոժը կլեպելու մէջ գողանալում, դա դեռ չէ նշանակում, Թէ ընդունակ կը լինէք և դատաւոր լինելու։ «Թան չէ, մածուն չէ», դատաւորութիւնը ամեն մարդու բան չէ։

Տէր-հայր, փաստերով ապացուցէք՝ Թէ մօտ, երբ և որտեղ էք տուել ինձ ձեր մըտացածին սկզբի 160 ր. 1902 Թ. ապրիլի 25-ից մի ամիս առաջ հաշուելով, որ իբր Թէ դուք տուել էք ինձ 100 ր. մինչև 1903 Թ. յունվարի 15-ը—ձեզ մօտ եղող գումարի հաշիւը հասարակութեան վէքիլներին յանձնելը—մօտ տասն ու կէս ամիս է լինում. եԹէ սպառողներին էիք տուել, ինչու, գոնէ ձեր տետրակում գրել չը տուիք, իսկ եԹէ Վարդանեանցին՝ ինչու «րօսպիսկա» չը ստացաք։ Դուք ասում էք, որ հաւատալով ինձ, առանց փաստաԹղԹի, այդ 100 ր. տուել էք ինձ, ուրեմն ես էլ, առանց դէմ ու դէմի, այդ 100 ր. իւրացրել եմ.—այդ է դուրս գալիս ձեր ասածից։ Ձեզ մօտ եղող այդ գումարին, ի միջի այլոց, պարտ էինք՝ ես 30 ր., քո փեսան 50 ր., քո քէնակալը 30 ր. և քո եղբայրը 40 ր.։ Ինչու ոչ մէկիս առանց «րօսպիսկաների» չէիք բաց Թողել և յանկարծ՝ 100 ր. առանց փաստաԹղԹի տալիս էք ինձ։ Ձեզ շատ լաւ յայտնի էր, որ սպառողների գանձապահը պ. Գ. Իսրայէլեանցն էր, իսկ հաշուապահը պ. Ա. Դանիէլեանցը. չէ՞ որ դուք միանգամից կարէիք նրանց, որ 100 ր. էք տուել Վարդանեանցիս խանութ մտցնելու,—մտցրել է Թէ՞ ոչ. հարցրել էք, ասացէք…

Գործի սկզբում, գրաւոր կերպով, ձեզ պայման առաջարկեցի այդ չարաբաստիկ 100 ր. հարցը ընտանեբար վերջ տալու. ինչու խոյս տուեցիք և ձգձգելով, գաղտնագողի կերպով, գործը հասցրիք այդ խայտառակ աստիճանին։ Հարկ եղած ժամանակ, պատրաստ եմ, Թէ տրամաբանօրէն և Թէ հոգեբանօրէն պարզաբանել, Թէ ինչը ստիպեց կամ դրդեց ձեզ այդ քայլը անելու։ Մատնութեան երկիւղի ազդեցութեան տակ իմ գործած մի մեծ հասարակական սխալից, որը մասամբ մԹնացրեց և իմ ամբողջ 18 տարվայ հասարակական գործունէութիւնը, դուք, տէր-հայր, օգտուեցիք և այդ 100 ր. ինձ վրա բարդել տուեցիք։

Գիւղական դատաւորների այդ վճռի ապօրինութեան դէմ մենք արդէն բողոքել ենք ուր հարկն է. Թերևս, գործի վերաքննութեան ժամանակ, դուք ձեր դիրքով, ձեր լանջախաչով, խաչ-փիլոնով, ձեր փեսայ ատենակալով և խնամի դատաւորներով, վկաներով ու մտերիմ տիրացուով կարողանաք ազդել, վճռին օրինականութիւն տալ և հասարակութիւնը 100 ր. կը ստանայ ինձնից, բայց դա կը լինի մի այնպիսի Թոյն, որը դուք ձեր քահանայական ձեռքով ուզում էք պատուաստել առանց այն էլ Թունաւորված հասարակական օրգանիզմը։ Սակայն այդ բոլորից յետոյ կայ աւելի մեծ դատաստան.—դա մամուլն է և հասարակաց դատաստանը, որին և դիմում ենք։ Իրողութիւնը մենք լուսաբանեցինք իր ամբողջ էւԹեամբ։ Իսկ դատելը Թողնում ենք հասարակութեան բանիմաց դասին։ Յօդուածս լոյս տեսնելու օրից մի ամիս ժամանակ ենք տալիս ձեզ, տէր-հայր, պատասխանելու, որից յետոյ կասենք մեր վերջին խօսքը։

Թոյլ եմ տալիս ինձ ուղղել մի քանի խօսք Մեղրիի երիտասարդութեան։ Դուք գիտէք, որ այժմ ես ապրում եմ պ. Աս-

---

*) Տես «Մշակ» № 64

տուածատուր Վաչեանի դրամական օգնութեամբ: Արդ՝ ինչպէ՞ս էք թոյլ տալիս, օրցերեկով, այդպիսի ապօրինութիւններ կատարելու ինձ նման մի մարդու դէմ. ինչ իրաւունքով է հասարակութիւնը այդ փողը պահանջում ինձնից, քանի որ նա ինձ ոչինչ չէ տուել: Թող պահանջի Վ. ք.-ն, եթէ իրօք տուել է, և ոչ հասարակութիւնը: Ճիշտ տեղին է կրկնելու ռուսական՝ „каковъ попъ, таковъ и приходъ" առածը:

Գիւղական ներկայացուցչական անդամներ, ինչ իրաւունքով, ո՞ր փաստերի հիման վրա, իմ օրով, Վահան քահանային տրւած 70 րուբլի ժամանակաւոր պարտքը զիջել էք նրան, առարկելով որ իբր թէ այդ փողը հասարակութիւնը պարտաւոր էր նրան տալու: Եթէ այդպէս լինէր, էլ ինչու չէինք նրա անունով առանձին հաշիւ բաց անում, կը գրէինք կամ հասարակութեան ծախքերում և կամ հասարակութեան պարտքում: Եթէ ցանկանում էք դուք քահանային «լաւութիւն» անել, արէք ձեր քսակից և ոչ հասարակական գրպանից: Դուք պարտաւոր էք այդ 70 ր. յետ տանել:

Եփրեմ Վարդանեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 7 մարտի *)

1902 թ. ս. Յովհ. եկեղեցու երէցփոխի պաշտօնը վարել է պ. Մ. Նաթաթեանը, որի նոյն թւի հաշիւները քննել են առանձին հաշւետեսներ, որոնք իրանց կազմած արձանագրութեան մէջ (20 յունիսի 1903 թ.) ասում են. «Աչքի առաջ ունենալով երէցփոխ պ. Նաթաթեանի այսքան բացարձակ անտարբերութիւնը և փասակար գործունէութիւնը իր առանձնած պաշտօնի մէջ, որոշեցինք խոնարհաբար խնդրել հոգևոր իշխանութիւնից նախ՝ պահանջել նրա աւելորդ և անտեղի վճարած գումարները, երկրորդ՝ հրամայել բարեկարգիչ քահանային մուտացութեան չը տալ անցեալ 1902 թ. պէս նաև 1903 թ., այլև ըստ շրջաբերականի ստուգել ամսէ ամիս հաշւեմատեանը. 3-րդ՝ զգուշանել երէցփոխին ինքնագլուխ ծախսեր չանել շինութիւնների վրա, այլ անել նոյնը ծխականների որոշման համաձայն. 4-րդ՝ պատուիրել երէցփոխին գումարների շահեցողութեան համար հակառակ չը գնալ պետութեան օրինաց 1224 յօդ. XI հատ.»:

Իսկ մեր ներկայ քննութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ նախկին քննիչները շատ բարեխղճութեամբ են քննել պ. երէցփոխի 1902 թ. հաշիւները. բայց ինչու հոգևոր իշխանութիւնը ամբողջ 6 տարի լռութեան է տուել ուշադրութիւն չը դարձնելով վերոյիշեալ արձանագրութեանը:

Եթէ տեղիս հոգևոր կառավարիչն իր ժամանակին ուշադրութիւն դարձնէր և համաձայն քննիչների արձանագրութեան զգուշացնէր պ. երէցփոխին, թերևս առիթ չը տար վերջինին հետևեալ 1903 թ. աւելի ևս լայն ծաւալ տալ իր ապօրինի գործունէութեան:

Ուրեմն ընդամենը պէտք է պահանջել պ. Նաթաթեանից 11,675 ր. 22 կ.:

Ընթերցողին պարզ գաղափար տալու համար պ. երէցփոխի գործունէութեան մասին՝ աւելորդ չենք համարում հաշւեմատեանից մի քանի տեղեկութիւններ առաջ բերել. 1) այդ գումարից պ. երէցփոխի մօտ զուտ փող մնում է 2191 ր. 11 կ., 2) 1903 թ. մատեանի ծախուց § 96-ում գրված է. «Փաստաբան պ. Ն. Բաբախանեանին տուած է 750 ր., նոյն յօդ. միաբան քահանայից ս. Յ. եկեղեցուն տուած է 762 ր. 50 կ.»: Թէ պ. Բաբաքխեանը և թէ միաբան քահանայք ստորագրած են մատեաններում: Մինչդեռ նոյն թւականների մատեաններից երևում է, որ եկեղեցին ոչ մի դատ չէ ունեցել, հետևաբար և կարիք չէ եղել փաստաբանի: Մեր կասկածը փարատելու համար դիմում ենք թէ փաստաբանին և թէ միաբան քահանայից: Նրանք պատասխանում են, որ թէև ստորագրած են, բայց փող չեն ստացել:

Այս հանելուկը պարզելու համար՝ ընթերցողի ուշադրութիւնն եմ դարձնում գոլիցինեան յայտնի չարաբաստիկ օրերի վրա, երբ իշխանը նախանձելով հայ կղերի և երէցփոխների չափից դուրս ճարպակալած լինելուն և այն վերագրելով հայ եկեղեցիների կալուածների ու եկամուտների ազդեցութեանը՝ փորձեց այդ համեղ պատառը խլել: Այդ ի նկատի ունենալով մեր «նախանձախնդիր կղերը» ու պօլիտիկոս երէցփոխները ցանկացան վագրի ճանկերից մի քանի պատառ ազատել, բայց այն էլ գայլի բաժին դարձաւ:

Բացի այդ պ. երէցփոխը հակառակ օրէնքի և ծխականների համախոսականի 3145 րուբլի աւել է ծախսել:

1903 թ. եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ ս. Յովհ. եկեղեցու երէցփոխի պաշտօնը ժամանակաւորապէս վարում է նոյն եկեղեցու Գրիգոր աւագ քահ. Թումանեանը: Այդ ժամանակ եկեղեցին բացի մոմից ուրիշ մուտք չունենալով Թումանեան աւագ քահանան իր ուշադրութիւնը կենտրօնացնում է մոմավաճառութեան վրա:

Ինչպէս երևում հաշւեմատեանից, իր պաշտօնավարութեան ամբողջ 15 ամսւայ ընթացքում (1903 թ. սեպ. մէկից մինչև 1904 թ. վերջը) գնել է 81 պուդ 10 ֆունտ, որի համար ճանապարհածախս է ցոյց տալիս Թիֆլիսից Գանձակ 87 րուբլի, ուրեմն պուդին 1 րուբլի 9 կոպ., մինչդեռ Թիֆլիսից Գանձակ (большой скорость) տարիֆը պուդին 32½ կոպ. է: Աւագ քահանայ Թումանեանը մոմավաճառ Եագօր Ղազարեանից բերել տուած մոմի համար ոչ մի հաշիւ չէ ներկայացնում, որից կարելի լինէր իմանալ, թէ որքան մոմ է գնել ու քանիսով: Նախկին երէցփոխի օրօք վաճառված կրճատ մոմի արժէք 56 ր. ստացել է Թումանեան քահանան և մատեանում չի մտցրել: Բացի այդ՝ մոմավաճառ ժամկոչ Արզումեանի և մոմի կրպակի կառավարչի հաշւետետրից երևում է, որ Թումանեան քահանան 2 պուդ 15½ ֆունտ մոմ, արժողութեամբ 239 րուբլի 20 կոպ., պակաս է մտցրել իր մատեանում: 1905 թ. երէցփոխ պ. Ս. Բաբաքխեան մի յայտարարութեամբ յայտնում է հոգևոր կառավարութեանը, թէ նախկին երէցփոխի պաշտօնակատար Թումանեան քահանայի մօտ պէտք է ինչ-որ մոմի փող լինի, և խնդրում է յանձնել իրան ինչպէս երէցփոխի, որից յետոյ աւագ քահանայ Թումանեանը, հոկտեմբերի 12-ին 1905 թ. մի յայտարարութեամբ ներկայացնում է հոգևոր կառավարութեանը 273 ր. 60 կ. և մի ցուցակ 70 ր. բաժանած զանազան մարդկանց առանց ստացականների: Թէ ինչու Թումանեան քահանան իր ժամանակին եկեղեցապատկան այդ գումարը մի տարւայ ընթացքում չէ մտցրել մատեան կամ փողը չէ յանձնել յաջորդ երէցփոխին մինչև նրա դիմելը—դրա մասին նա յայտնում է իր յայտարարութեան մէջ, թէ ինքը ցանկանում էր «բարեպաշտ» ժողովրդից նուիրված մոմի փողը գործադրել եկեղեցու բարեզարդութեան... համար... այն է՝ գնել մի պատկեր աւագ խորանի համար, որ յոյժ կարևոր է... Նոյն այս աւագ քահանայ Թումանեանը, լինելով հոգևոր կառավարութեան անդամ, յոյժ «նախանձախնդիր է» ցոյց տալիս իրան դէպի եկեղեցական շահերը: Իր ընկեր քահանային սպառնում է պատժել տալ, եթէ անմիջապէս չի ներկայացնի նրա մօտ եղած 4 ր. օրացոյցների փողը: Եթէ Թումանեան քահանան 4 ր. վերաբերութեամբ այդչափ աչալուրջ է, ապա ինչու 343 ր. մէկ տարի պահում է իր մօտ և յիշեցնելուց յետոյ միայն ներկայացնում:

(Կը շարունակվի)

—

Թալիշ գիւղ, 16 մարտի

«Մշակի» № 12-ում ես իմ մի յօդուածով համեստ կերպով նկարագրել եմ մեր գիւղացու խղճալի դրութիւնը: Այնտեղ բերել էի կղերի անհաշիւ ոտնձգութիւններից մի օրինակ:

Քաջ գիտենալով, որ լրագրական վէհ խօսքը մի հիւլէի չափ անգամ ազդեցութիւն չէ կարող անել խաւարի այդ հարազատ որդիների վրա, ես աւելորդ համարեցի յիշատակել այդ յանցագործի անունը:

Ահա այդ առիթով Ղազախից Զ. ք. Ալպրէեանը, զետեղելով «Մշակի» № 18-ում մի նամակ, առաջարկում է ինձ հրապարակ հանել և մատնել դատաստանին այդ աններելի յանցանքի հեղինակին, եթէ իրօք գոյութիւն ունի վերջինը:

«Մեր եկեղեցական օրէնքով, իւրաքանչիւր նուիրատուութիւն հաստատված է հաւատացեալների կամքի վրա»,—գրում է գործ. ք. Ալպրէեանը:

Եթէ այդպէս է, ապա ինչու Ջրաբերդի մեր գործ. ք. Եղիզարեանցը այլ կերպ է հասկանում մեր եկեղեցական օրէնքը և հրամաններ է արձակում եկեղեցին փակելու, նոյնիսկ այն պահուն, երբ կատաղի բծաւոր տիֆն է սկսել իր առատ հունձը թշուառների այս վայրում:

Եւ փակվում է եկեղեցին:

Ո՞վ գիտէ, գուցէ մեր Ջրաբերդին իր գործակալով հանդերձ աւելի լայն իրաւունքներ է շնորհված:

Սիւնեցի Լևոն

—

Կարս, 12 մարտի

«Պետրոս Մ...» կեղծ ստորագրութեամբ վարագուրված մի անձն փետրվարի 18-ին Արդահանից գրում է «Վտակին». «Զօրս զինված անձինք, երեկոյեան ժամը 7-ին, յարձակվեցին փողոցում զբօսնողների վրա. մէկին սպանեցին, երկուսին վիրաւորեցին, իսկ օր. Աստղիկ Մուրադեանին փախցրին»:

Սրանով հարկ ենք համարում, յանուն ճշմարտութեան, յայտարարել, որ այդ լուրը հիմնովին սուտ է և ստոր կրքերի արդիւնք: Օրիորդը ներկայումս գտնվում է Կարսում իր ծնողների մօտ:

Արամ

—

Շուշի, 12 մարտի

«Մշակ» լրագրի Մօսկվայի թղթակից Ոսկու-Ջօնը, որ լրագրութեան միջոցով հրաւիրում էր մեր թեմակալ առաջնորդ Աշոտ եպիսկոպոսին հաշիւ տալու հայ հասարակութեանը՝ այն տասնեակ հազարների համար, ո՞ր նա ժողովարարութեան ժամանակ ստացել էր Թիֆլիսում և Բագւում, իբրև ժամանակաւոր օժանդակութիւն մեր թեմական դպրոցի գոյութեան համար, ինչպէս երևում է Ոսկու-Ջօնի լռութիւնից, բաւականացաւ լրագրում լոյս տեսած հաշւով:

Բայց մենք, շուշեցիներս, որ դժբաղդութիւն ունենք մեր հոգաբարձական ներկայ կազմի անդամների հետ ապրելու կողք-կողքի մէկ քաղաքում, բաւականանամք արդեօք այդ հաշւով, հաւատամք բոլոր գրածներին:

Աշոտ եպիսկոպոսը հոգաբարձու Մելիքեանի մի համառօտ գրուածքով յայտնեց հայ հասարակութեանը, թէ այսքան գումար է ստացված, այսքան ծախսված, այսքան մնում է:

Բայց մի՞թէ հէնց այդքան, մի՞թէ դրան էր սպասում հասարակութիւնը:

Թո՛ղ սրբազանը բացատրէ, թէ ծախսված գումարներից որքան ռոճիկ է վճարված ուսուցիչներին սկզբից մինչև հիմա, ինչ առարկաների համար, ովքե՞ր են այդ ուսուցիչները (գրել ազգանունով), որտե՞ղ են հիմա դրանք, որ այժմս էլ ռոճիկ են ստանում, նրանցից քանի՞սը կան քաղաքումս և քանի՞սն են յաճախում դպրոցը և այլն, որպէսզի կարողանանք գնահատել մեր հեռատես հոգաբարձութեան գործունէութիւնը. Թող սրբազանը բացատրէ թէ մնացած մի քանի հազարները, որ դեռ չեն ծախսված, որտե՞ղ են—գանձարանո՞ւմ, տեղական բանկո՞ւմ, թէ՞ հոգաբարձուներից մէկի գրպանու՞մ է և ի՞նչ իրաւամբ:

Հոգաբարձութիւնը սարքված, մէկ ամիս սրանից առաջ, օրական 6 ր. ծախքով (суточный) մէկ ուրիշ հոգաբարձու, Ի. Մ. Շ.-եանին, ի միջի այլ յանձնարարութեանց, ուղարկել է բանակցելու բացակայող «հոգաբարձու գանձապահի» հետ, բայց նոյեան տապանի ագռաւի պէս յետ չէ եկել այդ ուղարկված հոգաբարձուն:

Վերոգրեալների վրա հրաւիրում ենք Էջմիածնի հոգևոր իշխանութեան լուրջ ուշադրութիւնը:

Քաղաքացի

—

Պետրովսկ, 10 մարտի

Սեպտեմբեր ամսում 1906 թւին մէկ նամակ եմ ստանում Մայկոպից (Կուբ. շրջ.), մէջը 10 հատ տոմսեր բաժանորդագրութեան՝ «Արցունքներ» ժողովածուի հրատարակիչ օրիորդ Զաբէլ Բերբերեանից, որով խնդրում է ջանք դնել բաժանել և գոյացած գումարն իսկոյն փոխադրել իրան. իսկ ես այս 10 տոմսից բաժանեցի միայն 5 հատ. համաձայն իր նամակի՝ շքեղ կազմով արժէր 3 րուբլի ամեն մէկը. գոյացած 5 օրինակից 15 րուբլին իսկոյն փոխադրեցի իրան. բայց ահա 1908 թիւն է, ոչ գրքերն եմ ստանում և ոչ նամակներիս պատասխանը. իսկ ես սաստիկ անարգված եմ համարում ինձ բաժանորդների առաջ, ուստի կը խնդրէի յարգելի օրիորդից, որ ուղարկէր կամ գրքերը կամ ստացած 15 րուբլին:

Բագրատ Ղամբարեանց

Ծանօթ. խմբ.—Օր. Զ. Բերբերեանի դէմ այսպիսի նամակներ մի քանիսն ենք ստացել:

—

Վերին-Ագդան, 9 մարտի

Վլադիկավկազի եկեղեցու գործակալ տէր-Յակոբ քահ. Սարիկեան, որ երեք որբ-չքաւոր աշակերտների թոշակներն ու ուսումնական պիտոյքներն է հոգում հոգաբարձութեանս միջոցով, ներկայ ուսում. տարւայ համար յիշեալ սաների թոշակի և պէտքերի համար ուղարկած է քսան րուբլի: Հրապարակով շնորհակալութիւն յայտնելով արժ. տէր-հօրը, որ իր ծննդավայրի ուսման գործին սատարում է, ուզում ենք յիշեցնել Բագու վերաբնակված վ.-ագդանցի երիտասարդութեան հետևել հայրենիքից հեռու քահանայի օրինակին, ի նկատ առնելով մի քանի տարիներից ի վեր Ղազախին, մասնաւորապէս էլ մեր գիւղին վիճակված դառնութիւնները—աւերներ, սով և այլն—փութալ ուսումնարանին օգնութեան:

Ի դիմաց հոգաբարձութեան՝

Աթաբէգ Մելիքսեդէկեանց

—

Շուշի, 17 մարտի

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով յայտնել, որ, միացնելով մեր ստորագրութիւնները հանգուցեալ հրապարակախօս Արփիար-Հայկակի սպանութեան դէպքի վերաբերմամբ հայ գրականագէտների և ժուռնալիստների ժողովի բողոքին, միևնոյն ժամանակ յիշեցնում ենք մեր գրական և հասարակական կեանքը ղլատող զանազան Վահէների, որ ընդունակ լինեն վերջապէս ըմբռնելու ի դէպ ասած Սալտիկով-Շչեդրինի այն խօսքերը թէ՝ «զէնքերից ամենաազնիւը և ամենաազդուն գրիչն է»... Պարոնայք, ձեր կոպիտ ոյժով, ձեր բռունցքով ու գնդակներով մի ծանրանաք մաքուր հասարակական գործիչների խղճմտանքի վրա. գործիչներ առանց մահաբեր զէնքերի, բայց որոնց առաջ խոնարհվում է ամբողջ կենսունակ հայ ազգը:

Պօղոս Զաքարեան, Լևոն Յովսէփեան

—

Մանգլիս, 10 մարտի

Մանգլիս ամառանոցի հայ ծխական դպրոցը ահա երկրորդ տարին է, որ բացվում և ուսումը կանոնաւոր շարունակվում: Այս տարի շնորհիւ մի քանի ճախորդ հանգամանքների՝ ուսումնարանը յաճախում են միայն 24 աշակերտներ ու աշակերտուհիներ: Ամառանոց եկողները նիւթապէս օգնեցին, հետևապէս դպրոցը կատարելապէս ապահովված է այս տարի: Եղած հանգանակութիւնից հաւաքվել է 505 ր. 85 կ., իսկ դպրոցի օգտին տուած ներկայացումից մնացել է զուտ արդիւնք 215 ր. 39 կ., ընդամենը 721 ր. 24 կ.: Տեղացի բնակիչներից հաւաքած նիւթական միջոցների վերաբերեալ կը լինի առանձին յայտարարութիւն:

Դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Մանգլիսում հիւրընկալած հայ հասարակութեանը, որը մի առանձին կարեկցութեամբ մեկնեց իր ձեռքը տգիտութեան մէջ խարխափողներին, տալով միջոց—բանալ նրանց համար լուսոյ դռներ:

Առանձին երախտագիտութեամբ հոգաբարձութիւնը շնորհակալութիւն է յայտնում անխոնջ աշխատողներին—տ. տ. Վարդուհի Ծատուրեանին, Աննա Տէր-Միքայէլեանին, Սօֆիա Րօտինեանցին, Բաղդասարեանցներին, իշխանուհի Թումանեանցին, Յովսէփեանցներին, օր. Մուրադեանին, պ. պ. Գրիգոր Մայիլեանցին, Արշակ Ահարոնեանին, Սուրէն Երզնկեանին և բոլոր այն անձանց, որոնք որևէ աջակցութիւն են ցոյց տուել թէ հանգանակութեանը և թէ ներկայացմանը:

Հոգաբարձութիւն

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

23 մարտի

ՕԴԵՍՍԱ: Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ Եակուտսկի և Ենիսէյսկի նահանգներն ու Թուրքեստանի երկիրն են աքսորել 3—5 տարի ժամանակով 28 անիշխանականների, որոնք պատրաստվում էին կողոպտել «Ռումեանցեվ» նաւը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նահանգական դատարանը երկու օրվայ քննութիւնից յետոյ, հարաւ-արևելեան երկաթուղիների վարչութեան ծառայող Պանիկօրօվսկուն, որ Պետերբուրգի կլուբներից մէկում թղթախաղում տանուլ էր տուել 247,000 ր., դատապարտեց մի քանի իրաւունքներից զրկման և 8 ամսով բանտարկութեան:

Երեք օրվայ քննութիւնից յետոյ, զինւորա-նահանգական դատարանը վերջացրեց այն 12 հոգու գործը, որոնք Պետերբուրգում անցեալ տարվայ ընթացքում կատարել էին 16 զինված յարձակումներ և կողոպտումներ: 4 հոգի արդար ճանաչվեցին, 8-ը դատապարտվեցին մահվան պատժի:

«Слово»-ի խմբագիր-հրատարակիչ Ֆեօդօրօվը ներքին գործերի մինիստրից թոյլտուութիւն է ստացել՝ գումարել մարտի 30-ին Պետերբուրգում պարբերական մամուլի ներկայացուցիչների համառուսական համագումար, քննելու այն հարցը, թէ ինչ կերպ ցանկալի է մասնակցել կոմս Լ. Ն. Տօլստօյի ծննդեան 80-ամեակին:

24 մարտի

ՄՕՍԿՎԱ: Որսորդական կլուբի դահլիճներում այսօր բացվեց պատմական և ժամանակակից զգեստների ցուցահանդէսը:

Արտաքին

23 մարտի

ՍՏՕԿՀՕԼՄ: Կարգադրված է ապրիլի վերջում մի յատուկ էսկադրա կազմել Դիրսէնի հրամանատարութեան ներքոյ, որ ուղեկցելու է թագաւորին, Վիլհէլմ պրինցին և թագաւորական տան միւս անդամներին Ռուսաստան՝ պրինց Վիլհէլմի պսակադրութեան առիթով:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: Միացեալ-Նահանգների՝ մի մի կողմից՝ և Անգլիայի ու Նորվեգիայի միջև՝ միւս կողմից, ստորագրված են միջնորդ դատարանի պայմանագրերը:

ՊԱՐԻԶ: Շինարարական աշխատանքի կապալառուները որոշեցին իրանց բանւորներին լօկաուտ յայտարարել: Սինդիկատի վարչութեան տեղեկութեան համաձայն, լօկաուտը կազմված է 20,000 բանւորների դէմ:

ՑԵՏԻՆԷ: «Գլաս-Ցրրէնգօրցա» լրագիրը դանուբ-ադրիական երկաթուղագծի առիթով ասում է, որ Չերնօգորիան թոյլ չի տայ, որ դէպի Անտիվարի որևէ երկաթուղագիծ կառուցվի, առաջ քան այն երկաթուղագծի աւարտումը, որ անցնելու է Չերնօգորիայի միջով:

Անտիվարի նաւահանգիստը աշխարհային առևտրական ճանապարհի վրա է և, Բեռլինի դաշնագրութեան ոյժով, չէզոք և գլխաւորապէս առևտրական նշանակութիւն ունի: Սան-Ջիօվանի-դի-Մէդուա նաւահանգստի կարգաւորելը աւելի մեծ ծախս կը նստի, քան ամբողջ երկաթուղին:

ԲԵՌԼԻՆ: Րէյխստագը ընդունեց միութիւնների և ժողովների օրինագծի 7-րդ կէտը, որ վերաբերում է լեզուի հարցին, այն խմբագրութեամբ, ինչպէս առաջարկում էր մասնաժողովը բլօկի կուսակցութիւնների կօմպրօմիս կապելու հիման վրա: Այս կէտի առիթով ծագեցին տաք և կրակոտ վիճաբանութիւններ: Ներկայ էին համարեա բոլոր պատգամաւորները: Օպպօզիցիան, տեսնելով որ նախագիծը կանցնէ, աշխատում էր վճիռը խափանել խռովութիւններ սարքելով: Պատգամաւորները բարձրաձայն խօսակցում էին իրար հետ, աղմկում էին, պահանջում էին բացարձակօրէն ձայնատւութիւն և զանազան մանր ուղղումներ էին մտցնում: Քուէարկութեան հետևանքները մեծամասնութիւնը ընդունեց բուռն և աղմկալից ծափահարութեամբ:

ԲԵՌԼԻՆ: «Նորդ-Դէօյտշէ-Ալհեմ.-Ցայտ.»-ը Մակեդոնիայի բարենորոգումների ռուսական առաջարկութիւնները համարում է մանրազնին մշակված և վկայում է, որ մեծ պետութիւնները սկզբունքով կը միանան նրանց:

«Կէօլնիշէ Ցայտ.»-ը ասում է, որ արտաքին գործերի մինիստրութիւնը Վիէննայում բնաւ համոզված չէ, թէ գոյութիւն ունի այն հիմունքը, որպիսին կը դրդէր Աւստրօ-Ունգարիային յօգուտ եւրօպական կօնցերտի հրաժարվել այն կարևոր արտօնութիւնից, որ ստեղծվել է միւրցշտէգեան ծրագրով: Եթէ նա կասկած յայտնէ ռուսական առաջարկութեան անհրաժեշտութեան մասին, այն ժամանակ Գերմանիան անկասկած նրան լիակատար աջակցութիւն ցոյց կը տայ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿՈՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
«ԽԱՐԱԶԱՆԻ» գրադարան № 1
✦ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔ ✦
գրքոյկը 13 նկարով և ուղարկվեց բաժանորդներին № 5 «Խարազանի» հետ
Շարունակվում է բաժանորդագրութիւն
„ԽԱՐԱԶԱՆ"
Ամենամսեայ շաբաթաթերթի
Վեցամսեակ—1 ր., եռամսեակ—50
ամիսը 20 կ.
Բաժանորդները կը ստանան 6 գրքոյկ ձրի
Հասցէն՝ Тифлисъ, Михайловская ул. № 38
Хачатуру Теръ-Маркарянцу.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, մարտի 25-ին
Հայ դերասանական ընկերակցութիւնը
Գ.՝պ. անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացնէ
Ցրից բարեկամը
Կոմեդիա 3 գործ. հեղ. Է. Շատրխանի
Մասնակցում են տ. տ. Մելիքեան, Յասմիկ, պ. պ. Տէր-Դաւթեան, Վրոյր, Մամիկոնեան, Ռշտունի և ուրիշները:
Սկիզբը 8½-ին
1—1

Լոյս տեսաւ
ՃՄԵՂԻ
Հարուստը կռապաշտ
գրքոյկը 28 էջ: Գինն է 8 կոպ.
(Ե. Կ.) 10—2

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—21

Առաջին Կովկասեան Պահեստ
ՍԵՐՄԵՐԻ
ԼԱՐՇԷ
Գոյութիւն ունի 1872 թւից
№ 23, Միխայլօվսկի պր., № 23
առաջարկում է
ՍԵՐՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի
ՓՈՐՁՈՒԱԾ
Յայտնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ Բաղդադի: Տուփեգինն է—6 մախալը—2 րուբլի: Գումարով գնողներին զեղչ:
(ա. օ.) 10—2

ՀԱՋՈՎ ՏԱՌԱՊՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
„ԼԵԼԻՎԱ"
գործարանի մալց-էկստրակտ և լեդենցները.
Վարշավա, Զելնայա փող., № 21.
Գոյութիւն ունի 1884 թւից:
Վաճառվում են դեղատներում և դեղագործական պահեստներում:
[illegible]
10—9

---

*) Տես «Մշակ» № 66.

Типографія „Экономія" Авака Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. д. Семины № 8.